№ 29 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11 — 1909 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11 № 29

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1909 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը՝ 80 կ., և առաքման ծախք՝ 20 կ.։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամակագրոշմ։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метиль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը
պատիւ ունի յայտնելու, որ ամսկս 14-ին, շաբաթ, Վանքի Մայր եկեղեցում, պատարագից յետոյ, կատարվելու է դպրոցի հիմնադիր
ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ
ՆԵՐՍԷՍ Վ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
(Չ. Շ.) հոգեհանգիստը։ 124. 2—1

Փետրվարի 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20 և 21-ին

Պ. Ս. ԴՕՐՕԺՆՕՎ

Սօլոլակսկայա փ., տ. Գուրգենօվի, տէլէֆօն 583.

ՄԵԾ

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

Միայն 10 օր, այն է՝ 11-ին, 12-ին, 13-ին, 14-ին, 16-ին, 17-ին, 18-ին, 19-ին, 20-ին եւ 21-ին փետրվարի

Մեծ էժան վաճառքի համար ստացված է 300,000 բուբլուց աւելի ապրանք, որը պէտք է վաճառվի վերև յիշված օրերում մինչև օրս չը լսված առասպելական էժան գներով։

☛ Վիտրինաներում դրվում են ապրանքների արտիկուլները՝ խիստ էժան գներով։

Էժան վաճառքի օրերը առաւօտը տեղի կունենայ առաւօտեան ժամը 9-ից մինչև 3½-ը և 4-ից մինչև 6½-ը երեկոյեան։

P. S. Խանութը բաւականաչափ մեծացված է, այնպէս որ կցված է Միրիժանովի շինութեան մէջ գտնվող խանութի հետ։

(ա) 127. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի Ժողովարանի Աւագների Խորհուրդը հրաւիրում է ցանկացողներին ստանձնել ամարային շինութեանը վերաբերող ասֆալտի գործը՝ 200 քառ. սաժէն տարածութեամբ, ¾ դիւյմ հիմքում, 2 վերշոկ կրի բէտոնից. յայտարարութիւնները տալ Ժողովարանի գրասենեակը մինչև ներկայ փետրվարի 20-ը՝ նշանակելով վերջին գինը, ասֆալտի և գուդրոնի տեսակները։ Մանրամասնութիւնների համար դիմել տեղի վրա աշխատանքներ կատարողին, Միխայլովսկի պրոսպէկտ, Մէյէրի այգին, ամեն օր մինչև ցերեկվայ 12 ժամը։

(Չ.) (ա.) 126. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

պատիւ ունի հրաւիրելու մեծարգոյ անդամներին ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

որ կայանալու է շաբաթ, փետրվարի 14-ին, երեկոյեան ժամը 7-ին ընկերութեան դահլիճում—Աբաս-Աբադեան հրապարակ սեփ. տ. № 7 (Абасъ-Абадская площадь № 7 с. д.), որտեղ քննվելու եւ հաստատվելու են կենսրօնի եւ նիւղերի 1909 թ. նախահաշիւները։

ա. (Չ. հ. շ.) 121. 3—1

Թիֆլիսի Ժողովարան

Աւագների Խորհուրդը յայտնում է ի գիտութիւն Ժողովարանի անդամների, որ փետրվարի 20-ին նշանակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

հետևեալ հարցերը քննելու համար.

1) Քննութիւն և հաստատութիւն 1909 թ. նախահաշիւի,
2) Քննութիւն և հաստատութիւն գլուղարանը կառավարելու համար կազմված հրահանգի, և
3) Քուէարկութիւն Ժողովարանի համար կանդիդատներ առաջարկված անձերի։

Ընդհանուր ժողովի սկիզբն է երեկ. 9 ժամին

(11, 20) (առ.) 125. 2—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Մ. Գ. ԴԱՆԻԷԼ-ԲԷԿ

Ընդունելութիւնը } Առաւօտեան 10—2 ժ. Երեկոյեան 4—6 ժ.
Հասցէ՝ Ртищевская ул., № 7.
(Չ. շ.) ա. 50—44

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
(ամբուլատորային ընդունելութիւն)

եկող հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիտեանցի։

Տէլէֆօն 695

Ե. Դ. ՖԷԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։

Վ. Դ ԴԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների։

Բ. Ա. ՊՈՊՈՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի։

Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեք. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։

Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշու հիւանդութիւններ։

Ն. Մ. ՄԵԼԻՐՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը։

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։

Բ. Ս. ՄՈՒՍԱԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։

Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտէրիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։

Օպերացիաները և խորհրդատուութիւնը ըստ համաձայնութեան։

Շուտով բացվելու է ստացիօնարական բաժանմունք 30 մահճակալներով։

(ա. օ.) ա. 38. 100—21

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասեան հարցապնդումը վերջ ի վերջոյ փոխարկվեց Կովկասեան բարենորոգութիւնների խնդրի։

Պուրիշկեվիչը և նրա համախոհները, հանդէս բերելով Կովկասեան հարցապնդումը, նպատակ ունէին տապալել Կովկասեան Փոխարքային և միևնոյն ժամանակ վերադարձնել Գոլիցինի օրերը։

Նրանց նպատակն էր զրկել Կովկասը բարենորոգութիւններից և թողնել նրան միջնադարեան կարգերի արգելարանում։

Ոչ զեմստվո, ոչ ընդհանուր ժողովրդական կրթութիւն, ոչ դատարանի բարեփոխութիւն, ոչ յարգանք դէպի ազգութիւնների առանձնայատկութիւնները—ոչ մէկը դրանցից ընդունելի չէ հարցապնդում անողների շարքերում։

Եւ եթէ հարցապնդումը այն ընթացքը ստացած լինէր, որը ծրագրել էր Պուրիշկեվիչը իր համախոհներով, այն ժամանակ պէտք էր ներկայ Դումայի օրով թաղված համարել Կովկասեան բարենորոգութիւնների հարցը։

Սակայն բոլորովին հակառակը դուրս եկաւ։

Ստացվեց բոլորովին անսպասելի հետևանք։

Պետական Դուման մի այնպիսի բանաձև ընդունեց հերթական գործերին անցնելու ժամանակ, որ հրապարակի վրա դրեց Կովկասեան բարենորոգութիւնների խնդիրը։

Բանաձևը իր ամբողջ կազմութեամբ բաւարար չէ, որովհետև նա կարծես շեղակի և զարտուղի ճանապարհով ձգտում է վարկաբեկել կովկասեան բարձր վարչութեան ընած ուղղութիւնը, բայց ըստ էութեան նա ընդգծում է բարենորոգութիւնների մեծ կարևորութիւնը և նրանց վրա է հիմնում երկրի խաղաղացումը և կարգաւորումը։

Ճառախօսներից, մէկը Բօբրինսկիյ երկրորդը, իր հետաքրքրական և մտածված ճառի մէջ շեշտեց, որ Կովկասեան շփոթը հետևանք է Կովկասեան հին վարչութեան մեղքերի, ճորտատիրութեան կարգերի գոյութեան, դպրոցների անբաւական վիճակի, թափառական տարրերի կեանքի անբարեկարգ դրութեան, և հարց յարուցեց մի յատուկ յանձնաժողովի կազմութեան մասին, որը զբաղվեր Կովկասեան ըէֆօրմների քննութեամբ։

Նոյն խնդիրը աւելի որոշ և կտրական կերպով դրեց Միլիւկով, ցոյց տալով ծայրերկիրների՝ նրանց թւում և Կովկասի համար գործադրվող ներքին քաղաքականութեան կատարեալ սնանկութիւնը և անհերկայ փաստակարութիւնը։

Եւ Պետական Դուման, հոկտեմբերեանների բերանով, որքան էլ ցանկացաւ չափաւոր լինել, այնուամենայնիւ ընդգծեց բարենորոգութիւների խնդիրների վերաբերեալ հետևեալ կէտերը՝

1) Վարչական մարմինների բարեփոխութեան,
2) Զեղծումների քննութեան և վերացման,
3) Հողային բարեկարգութեան,
4) Դատական բարեփոխութեան,
5) Գաղթային գործի կարգաւորման,
6) Քաղաքային և զեմստվային ինքնավարութեան։

Միևնոյն ժամանակ յիշատակվում է, որ պէտք է նկատի առնվեն ազգայնական առանձնայատկութիւնները։

Դրված է նաև մի խնդիր. մեր երկրի անմիջական կախումը սահմանել մինիստրների խորհրդից, մի խնդիր, որի աջող որոշումը պայմանաւորված է այն բանից, թէ ինչ տեսակ կը լինեն սահմանված զանազան տեղական խնդիրների մշակութիւնը և լուծումը Կովկասում և Պետերբուրգում։

Ցաւենայն դէպս՝ մի բան պարզ է, որ Պետական Դուման ստիպված է խօսել և խորհել Կովկասեան բարենորոգութիւների մասին։

Այդ պէտք է ուշադրութեան առնել։

Մենք կը խօսենք այդ կարևոր խնդրի մասին։

Ա. Բ.

ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ՍԷՅՄԻ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Պետերբուրգ, 9 փետրվարի

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսաստանի, Ցար Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն, և այլն, և այլն, յայտնում ենք սրանով ֆինլանդական Մեծ Իշխանութեան Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին.

Այժմեան հերթական սէյմը բանալով, նրա տալմանը, ի խախտումն ֆինլանդական սէյմի կանոնադրութեան 24-րդ յօդուածի, և չը նայած Մեր ցուցմունքով նրան ուղղված նախազգուշութեանը, թոյլ տուեց իրան սէյմի անունից անտեղի քննութիւն անել մինիստրների խորհրդի մշակած և Բարձրագոյն հաստատված ֆինլանդական գործերի ուղղութեան կարգի կանոնադրութեան վերաբերութեամբ։ Այդ քննութիւնը ապացուցում է, որ սէյմը տարբեր է հասկանում յիշեալ օրէնսդրական ակտի իսկական միտքը, ակտի, որ հրատարակված է համապետական շահերի պաշտպանութեան համար, որոնց ապահովութիւնը միշտ պէտք է գերակշռող նշանակութիւն ունենայ։

Այդօրինակ անտեղի քննութիւններից հետևցնելով, որ սէյմը ներկայ դէպքում չը ղեկավարվեց Ֆինլանդիայի իրական բարեկեցութեան գիտակցութեամբ, որ անքակտելի կերպով շաղկապված է հանուր պետութեան շահերի հետ, Մենք այդպիսի պայմաններում պաղաւէտ և արդիւնաշատ հետևանքներ չենք սպասում այժմեան սէյմի աշխատանքներից։

Ընդ սմին հրամայելով կատարել սէյմական պատգամաւորների նոր ընտրութիւն, հարկաւոր դատեցինք ուշ ձակել այժմեան հերթական սէյմը փետրվարի 9-ին և գումարել, համաձայն Մեր հաստատած սէյմական կանոնադրութեան 18-րդ յօդուածի, նոր սէյմ 1909 թուի յունիսի 1-ին, որով պատգամաւորների ընտրութիւնները նշանակել մայիսի 1-ից։ ՆԻԿՕԼԱՅ

Ցարսկոյէ Սէլօ, 8 փետրվ. 1909 թ.

(«Հ. Գ.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 9 փետրվարի

Փրկանք ստանալու նպատակով յափշտակեցին հարուստ մահմեդական Հալիլիէվի տասնվեցամեայ որդուն։ Տեղի են ունենում մանրազնին խուզարկութիւններ։ («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 9 փետրվարի

Այսօր Ցարսկոյէ Սէլօ գնաց բոլգարական թագաւոր Ֆէրդինանդը։ Թագաւորական սրահում բոլգարական բարձրաստիճան հիւրը ընդունվեց Կայսրից և Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչից։ Սրահից նոցին Մեծութիւնները և Ֆէրդինանդը մեկնեցին Ալէքսանդրովսկի պալատը։

(«Հ. Գ.»)

Պետերբուրգ, 9 փետրվարի

Այսօր բոլգարական թագաւոր Ֆէրդինանդը այցելեց Մեծ Իշխաններին և Իշխանուհիներին, արտաքին գործերի և պալատի մինիստրներին, օբէրհոֆմարշալ իշխան Դոլգորուկովին։ Ֆէրդինանդ թագաւորին այցելեցին արտաքին գործերի և պալատի մինիստրները, Պետական Դումայի նախագահը, Պետերբուրգի և Պետերհոֆի կոմենդանտները, քաղաքապետը և ուրիշ զինուորական և աշխարհիկ բարձրաստիճան անձեր։ («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 7 փետրվարի

Հոկտեմբերեանները յանձնարարել են բարոն Մեյէնդորֆին մշակելու մի օրինագիծ խելացոր պատգամաւորներին Պետական Դումայից հեռացնելու մասին։

Սենատը բացատրել է, որ տղամարդ ամուսինները իրաւունք ունեն դատարանի միջոցով պահանջելու, որպէս զի իրանց մօտ բնակեցնեն իրանցից հեռացած կանանց։ («Բ.»)

Բելգրադ, 9 փետրվարի

Կայացաւ մի միտինգ Զագրէբում, պետական դաւաճանութեան գործի առիթով սկված սերբական դատավարութեան դէմ բողոքելու նպատակով։ Ներկայ էին 5000 մարդ։ Ընդունվեց մի բանաձև, որով բողոք է յայտնվում Սերբիայի մասին զրպարտութիւններ յերիւրելու դէմ, որոնք բղխում են Վիէննայից և Բուդապէշտից, Եւրոպայի ուշադրութիւնը դարձնելու այդ գործի վրա, որ XX դարի ամօթանքներից մէնն է Խազմում։ Ժողովն անցաւ խաղաղ։ («Հ. Գ.»)

Վիէննա, 9 փետրվարի

Բօսնայում պաշտօնապէս հաղորդ-

վեց, որ այն լուրերը, թէ իբր պատերազմը Սերբիայի հետ անխուսափելի է, իբր թէ այդ պատերազմը արդէն վճռված է, անհիմն են։ Թէև չէ կարելի ժխտել, որ դրութիւնը լուրջ է, սակայն կառավարութիւնը չունի այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք նշան լինէին՝ թէ Աւստրօ-Ունգարիան յետ է կասում մինչև օրս իր ունեցած խաղաղ քաղաքականութիւնից։ («Հ. Գ.»)

—

Բիւզրադ, 9 փետրվարի

Բոլոր կուսակցութիւնները համաձայնեցին կազմել կօալիցիօն կաբինէտ։ («Հ. Գ.»)

—

Օմախա (Ներբասկա նահ.), 9 փետրվ.

Յոյնի ձեռքով մի ոստիկան սպանելու վրէժը առնելու համար, մօտ 3000 հոգուց բաղկացած ամբոխը յունական թաղում մեծ անկարգութիւններ կատարեց։ Թաղի բնակիչների հետ ընդհարվելու ժամանակ շատ մարդ վիրաւորվեց, որոնց թւումն են մի քանի իտալացիներ և բումիններ, որոնց ընդունեցին յոյների տեղ։ («Հ. Գ.»)

—

Հօնգկօնգ, 9 փետրվարի

Կանտոն-Խանկօու երկաթուղագծի ինն բանւորների ռոճիկները չը տալու պատճառով մի քանի հարիւր բանւորներ անկարգութիւններ արին։ Կարգու կանոնը վերահաստատելու ուղարկված զօրքերը վիրաւորեցին 25 հոգու։ Երեք զինւորներ անհետ կորան։ («Հ. Գ.»)

—

Եւրօպայի դիպլոմատիական շրջաններում յուզիչ տրամադրութիւն է տիրում։ Աւստրիական մամուլի սկսած թշնամական յարձակումներին շատ լուրջ նշանակութիւն է տրվում և կարծում են, որ նրանք նպատակ ունեն նախապատրաստել հասարակական կարծիքը առաջիկայ անակնկալ անցքերի համար։

Աւստրիան, ըստ երևոյթին, կանգ է առել ներկայ ժամենտի վրա, իբրև ամենայարմարը՝ Սերբիայի դէմ պատերազմական գործողութիւններ սկսելու նպատակով, որին ըստէ առ ըստէ սպասում են։

Աւստրիական դիպլոմատիան այժմ ամեն ջանք գործ է դնում հաւատացնելու բոլոր պետութիւններին, որ Աւստրիան ագրեսիվ դիտաւորութիւններ չունի և որ շահագրգռված պետութիւնները արդէն գործ են դրել ամեն տեսակ միջոցներ Սերբիան հանգստացնելու նպատակով, բայց այդ բոլորը մնացել է անհետևանք։ Ըստ երևոյթին, ինչպէս «Рѣчь» լրագիրն է ասում, այդ ուղղութեամբ է գործում աւստրիական դիպլոմատիան նաև Պետերբուրգում։

Այդ խնդրի հետ են շաղկապում այն երկարաւէ այցելութիւնը, որ արել է աւստրիական դեսպան կոմս Բերխտոլդը մինիստրների խորհրդի նախագահին։

—

Նօրվէգիական հռչակաւոր գրող Բիէրնսօնը հրատարակել է մի կոչ, որով հրաւէր է կարդում օգնելու սարկացած Բոսնիային։ Այդ կոչը կը տպագրվի բոլոր պրօգրէսսիվ թերթերում։

—

Վիէննա, 2 փետրվարի

Այստեղ Սոֆիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, բուլգարական արտաքին գործերի մինիստրութեան մէջ ստացվել է Աւստրիայի և Գերմանիայի հակա-առաջարկը ընդդէմ ռուսականի։ («Рѣчь»)

—

Բերլին, 2 փետրվարի

«Վոսսիշէ Ցայտունգը» հաղորդում է, որ Աւստրիան ներկայումս աշխատում է տեղեկութիւններ հաւաքել՝ թէ ինչ դիրք կը բռնեն պետութիւնները այն դէպքում, եթէ ինքը պատերազմական գործողութիւններ սկսի Սերբիայի դէմ։ Աւստրիան Պարիզի միջոցով փորձ է անում պարզելու Ռուսաստանի դիտաւորութիւնները այդ առիթով։ («Рѣчь»)

—

Բերլին, 4 փետրվարի

Գերմանական գիւղատնտեսական խորհրդի անդամների հանդիսաւոր ճաշկերոյթին Բիւլովը իր ճառում բացատրել է իր գիւղատնտեսական ծրագրի հիմունքները՝ հովանաւորութեան սաստկացումը և հացի ու անասունների մաքսագնի բարձրացումը։

«Այդ ծրագիրը,—ասաց կանցլերը,—նա կեանքի մէջ է մտցրել չը նայելով բոլոր դժուարութիւններին ու խոչընդոտներին և այսուհետև էլ հաւատարիմ կը մնայ նրան, քանի վարելիս լինի իր ծանր պարտականութիւնները (բացագանչութիւններ՝ «բրաւօ»), որը երևի աւելի երկար կը տևի, քան յուսով են հակառակորդները» (բուռն ծափահարութիւններ)։ Ապա կանցլերը անցաւ համակայսերական ֆինանսական բարենորոգումների հարցին։

Այնուհետև կանցլերը մեծ բաւականութեամբ յիշատակեց անգլիական արքայական զոյգի տուած այցելութիւնը, որը առիթ տուեց երկու ազգութիւններին ապացուցանելու, որ նրանք ցանկանում են պահպանել բարեկամական և բարի յարաբերութիւններ, ու յայտնեց. ««Մենք հիմք ունենք ենթադրելու, որ բոլոր պետութիւնների խաղաղ ջանքերին կաջողվի ցրել Արևելքում կուտակված ամպերը»։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 4 փետրվարի

Լուր է պտտում, որ հոգևոր ճեմարանների աւտոնոմիան վերացնելու պատճառով պաշտօնից հրաժարվում է սինոդի օբերպրօկուրօրի օգնական Իզվոլսկին։

«Рѣчь» լրագիրը լսել է, որ Կիրիոն եպիսկոպոսը (վրացի) էկզարխ Նիկոնի սպանութեան գործի համար պատասխանատուութեան է ենթարկվում։ («Баку»)

—

Մի քանի օր առաջ յափշտակված Աբրահամեանցը փետրվարի 4-ին վերադարձել է տուն։ («Баку»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Լօնդօնում ստացվել է Թէհրանից հեռագիր, որ շահը յայտնել է Ռուսաստանին ու Անգլիային իր պատրաստակամութիւնը սահմանադրութիւն, մէջլիս տալու իր երկրին, եթէ միայն պետութիւնները երաշխաւորեն նրա համար գահի, կեանքի և ընտանիքի ու գոյքի անձեռնմխելիութիւն։

—

Թաւրիզ, 9 փետրվարի

Երէկ, դէպի Զուլֆա տանող ճանապարհը մաքրելու նպատակով, մի քանի հարիւր ֆէդայիներ Սաթթար-խանի առաջնորդութեամբ յարձակում գործեցին Բահիմ-խանի ձիաւորների վրա, որոնք իջել էին քաղաքից տաս վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ալվար գիւղում։ Ձիաւորները, ամուր դիրքեր գրաւելով, վեցժամեայ կռիւ յետոյ, յարձակումը յետ մղեցին։ Յեղափոխականները կորցրին մօտ 40 սպանված և վիրաւոր։ Ձիաւորների կորուստները յայտնի չեն։

Թաւրիզ-Զուլֆա պարսկական պօստը արդէն մի ամիս է, որ չէ երթևեկում։

Հիւպատոսարանի պօստը երէկ, կրակի հանդիպելով ձիաւորների կողմից, վերադարձաւ կրկին Թաւրիզ։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզի խաղողու ռուսական ընկերութեան վարչութիւնը, «Р. В.» լրագրի ասելով, հեռագիր է ստացել, որ Թաւրիզը պաշարող շահի զօրքերը ոչնչացրել են Թաւրիզը Զուլֆայի հետ միացնող հեռագրական հաղորդակցութիւնը մի վերստ տարածութեամբ, ուստի հեռագիրները հաղորդվում են հնդօ-եւրօպական կաբելով։ Պօստը երթևեկում է առանց արգելքների։ Շահի զօրքերի հրամանատարը չէ թոյլատրել ընկերութեան գործակալներին վերանորոգել հեռագրական հաղորդակցութիւնը։ Այդ ի նկատի առնելով ընկերութեան վարչութիւնը դիմել է արտաքին գործերի մինիստրին՝ խնդրելով առաջադրութիւն անել Թէհրանում պարսից կառավարութեանը, որպէսզի նա միջոցներ ձեռք առնէ պահպանելու ռուսական հեռագրական հաղորդակցութիւնը և թոյլատրէ բանւորներին վերանորոգելու նրան։

—

Սաթթար-խանից, «Нов. Зак.» լրագրի ասելով, տեղեկութիւն է ստացվել, որ Թաւրիզ քաղաքը առաջվայ պէս անմատչելի է շահի զօրքերի համար, և որ սահմանադրական մարտիկների պարտութեան մասին տարածված բոլոր լուրերը ստայօդ են։ «Հաւատացէք,—գրում է Սաթթարխանը,—եթէ մենք արդարև պարտված լինէինք, այն ժամանակ Էյն-ուդ-Դավլէն վաղուց արդէն յայտարարած կը լինէր ամբողջ աշխարհին իր՝ Թաւրիզի գեներալ-նահանգապետի պաշտօնը ընտանձնելու մասին։ Մինչդեռ նա; մեր այդ գեներալ-նահանգապետը, ութերորդ ամիսն է, որ պատում է միայն քաղաքի շուրջը։ Իմ կարծիքով, այդ ամենալաւ ապացոյցն է հեռագրական տեղեկութիւնների ստայօդ լինելու մասին»։

—

«Закавк.» լրագրին հեռագրում են Հինն-Նախիջևանից հետևեալը.

Թաւրիզից հաղորդում են, որ փետր. 7-ին Խոյի մօտերքում ընդհարում է տեղի ունեցել մակուցիների և ֆէդայիների միջև։ Վերջիններս շրջապատելով մակուցիներին երեք կողմից, համարեա, ոչնչացրել են ամբողջ զօրամասը, որոնցից շատ քչերին է աջողվել ազատվել։ Կռվի տեղում ընկած են 200-ից աւելի դիակներ։

Փետրվարի 8-ին վաղ առաւօտից Թաւրիզի մօտ սկսվել է կռիւ Սաթթար-խանի և Բահիմ-խանի ու Սամադ-խանի միացեալ ոյժերի միջև։ Կռիւը տևել է, համարեա, մինչև երեկոյ և, շնորհիւ Բաղիր-խանի յարձակման, վերջացել է պահպանողականների պարտութեամբ։ Սաթթար-խանի մարդկանցը աջողվել է գերի վերցնել Բահիմ-խանի որդուն։

—

Թէհրանից փետրվարի 4-ից խփված մի հեռագրով Պ. Հ. Գործակալութիւնը հաղորդում է, թէ Լօրիստանում խիստ ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել։ Աւերվել է 60 գիւղ, որոնցից մի քանիսը մասամբ, իսկ մնացեալն ամբողջովին անցել է հողի տակ։ Լուրերին նայած՝ մեռել է 60 մարդ, իսկ կենդանի մնացածները՝ զուրկ կենսական մթերքներից՝ փախել են Բուրուջիրդ և կառավարութիւնից օգնութիւն են խնդրում։

—

Ղօչան, 1 փետրվարի

Մէշէդից այստեղի վրայով յունվարի 21-ին երկու թնդանօթով Դէրէգէզ ուղևորված 200 ձիաւորները յունվարի 27-ին լուր բերին, որ շրջապատել են Նախօնդան գիւղը։ Նախօնդանը Դէրէգէզից 2 փարսախ հեռաւորութեան վրա է գտնվում։ Այս գիւղն և իր շրջակայ մի քանի գիւղերն էին, որ մօտ երկու ամիս է ինչ ապստամբվել էին կառավարութեան դէմ, պահանջելով նորից վերականգնել սահմանադրութիւնը։ Այդ Նախօնդան գիւղումն է եղել սահմանադրականների պարագլուխ Աղա-Մամադը, որին Դէրէգէզի դատաւոր Մախսուդ-խանը իր ունեցած ոյժերով, ինչպէս և Ղօչանից 2—3 անգամ ստացած օժանդակ ոյժերով, այդ երկու ամսվայ ընթացքում անկարող եղաւ յաղթել։ Սակայն, ինչպէս հաստատ աղբիւրներից տեղեկացանք, յունվարի 28-ին Դէրէգէզից հեռագրով և սուրհանդակով լուր են բերել տեղիս դատաւորին, որ Մէշէդի զօրքերը, շրջապատելով Նախօնդանը, ազատագրել են այդ գիւղը։ Աղա-Մամադն իր չորս ընկերներով փախել է, իսկ գիւղացիք՝ սարսափահար այդ անակնկալ դէպքից՝ հպատակվել են կառավարութեանը։ Սահմանադրականներից 10—15 հոգի են սպանված, իսկ վիրաւորների թիւը դեռ ճիշդ չէ իմացվում։ Ամբողջ գիւղը ենթարկված է զինւորների թալանին։ Լսվում է, որ Մախսուդ-խանը 1000 թուման և մէկ ձի ընծայ է խոստացել նրան, ով Աղա-Մամադին ողջ կամ գլուխը կը բերէ իր մօտ։

Դէրէգէզից եկած սուրհանդակի ասելով, այդ սպանված սահմանադրականների գլուխները բերելու են այսօր՝ այստեղից էլ Մէշէդ տանելու համար, ի ցոյց ժողովրդի։ 1907 թուին էլ Բուժնուրդից Մէշէդ էին բերել իմուդների 40 գլուխները։ Այն ժամանակ այդ՝ ցցի վրա բարձրացված 40 գլուխներին ընկերացրել էին բազմաթիւ գերիներ և հրապարակում, ուղղակի նահանգապետի ներկայութեամբ, խուժանը յարձակվելով գերիների վրա այնքան գանակոծեց նրանց, որ այս վերջիններն անընդդայացան։

Էլչիբէգ

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս, 9 փետրվարի

«Սաբահը» Ադրիանուպօլսից հեռագիրներ ստացաւ, որոնց համաձայն Բոլգարիան ձեռնարկել է երկրորդ և երրորդ զօրաբանակների մոբիլիզացիային։ Հեռագիրներում հաղորդվում է նաև Բոլգարիայի զանազան պատերազմական պատրաստութիւնների մասին։ («Հ. Գ.»)

—

Սոֆիա, 9 փետրվարի

Կ. Պոլսի լրագիրների հաղորդած այն տեղեկութիւնը, իբր Բոլգարիան զէնքի է կոչում երկրորդ և երրորդ զօրաբանակներին և պատերազմական պատրաստութիւններ է տեսնում, բոլորովին անհիմն է։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 9 փետրվարի

Ռուսաց դեսպանի հետ, Ֆէրդինանդ թագաւորին Պետերբուրգում ցոյց տրված ընդունելութեան առիթով, ունեցած խօսակցութեան ժամանակ մեծ վեզիրը, ընդգծելով Իզվոլսկու բացատրութիւնների բարեկամական բնաւորութիւնը, դիմեց Թիւրքիայի և Բոլգարիայի միջև ֆինանսական միջնորդութեան մասին Ռուսաստանի արած առաջարկութեան քննութեանը։ Ընդսմին Հիլմի-փաշան ասաց, որ թիւրքական կառավարութիւնը ընում է առաջարկութեան մանրամասնութիւնները և ամեն ջանք գործ կը դնէ ամենաանկեղծ յարաբերութիւններ ստեղծել իր և ռուսական կառավարութեան միջև։ («Հ. Գ.»)

—

Օսմանեան պարլամենտի կողմից ընտրված և սահմանադրութիւնը վերաքննելու պաշտօն ունեցող յանձնաժողովը, սահմանադրութեան 5-րդ յօդուածի վրա, որտեղ ասված է «Վահ. սուլթանի անձը նուիրական և անպատասխանատու է»,—հետևեալ յաւելուածն է խմբագրել. «Իր մինիստրները պատասխանատու են»։

—

Կ. Պոլսի հայ թերթերը հրատարակեցին Իզմիրլեան սրբազանի պատրիարքական առաջին կոնդակը, ուղղված Թիւրքիայի հայ ժողովրդին, հոգևորականներին, աշխարհականներին և բոլոր դասակարգերին։ Կոնդակը գրված է պահպանողական ոգով և յորդոր է կարդում հայ հոգևորականութեանը՝ անարատ և անթերի պահպանել Հայաստանեայց եկեղեցու բոլոր աւանդութիւնները, կարգերը և կանոնները։

—

Կ. Պոլիս, 4 փետրվարի

Անգլիական դեսպանը հրաժարվել է ընդունել «Միութիւն և Առաջադիմութիւն» կօմիտէի կողմից ուղարկված պատգամաւորութիւնը, զժգոհ լինելով Բեամիլ-փաշայի հրաժարականից։ («Баку»)

—

Կ. Պոլիս, 4 փետրվարի

Իր ծրագրային ճառում Հիլմի-փաշան ընդգծում է ազգի համերաշխութեան կարևոր նշանակութիւնը։ «Այդ զգացմունքը,—ասաց վեզիրը,—ոգևորում է ամենքի սրտերը, դիւրացնում է յարաբերութիւնները ուրիշ ազգութիւնների հետ, որոնց նպատակից դուրս է այժմ յափշտակումներ անել, որովհետև նրանք իրանց առաջ տեսնում են մի ժողովուրդ, որը գիտէ իրան գնահատել, որը, շնորհիւ իր միաբանութեան, գիտէ, որ ցանկանում է ապահովել իր անկախութիւնը։ Գուցէ այդ նկատումներով ուրիշ թէ հարևան և թէ հեռաւոր պետութիւնների հետ ունեցած մեր յարաբերութիւնների ժամանակ մենք կը հետևենք խաղաղ, բայց հաստատուն և արժանավայել գործունէութեան եղանակի, որը արդէն սկսված է սահմանադրական բեժիմով։ Մենք չենք ունենայ ուրիշ դեվիզ, միջազգային եղբայրութեան սկզբունքից բացի՝ առանց խախտելու ուրիշների իրաւունքները և առանց թոյլ տալու, որպէսզի արհամարհեն մերը։

«Մենք չենք կասկածում, որ կաջողվի մեզ, հակառակ ամեն տեսակ դժուարութիւնների, ներկայում թէ ապագայում, խուսափելու պատերազմի վտանգից։ Այն դժուարութիւնները, որոնք կային դեռ մօտիկ ժամանակներս, այժմ արդէն վերջնականապէս հարթվելու վրա են։ Կախված չի լինի (մեզանից երևի), եթէ մօտիկ ապագայում չը լուծվեն բոլոր հարցերը ի բաւականութիւն բոլոր կողմերի և մեծ պետութիւնների համաձայնութեամբ, որոնց համակրութիւնը, ինչպէս առաջ, այնպէս և այժմ, մեզ համար մանաւանդ թանգ արժէ։

«Այսուհետև մենք կարող կը լինինք աւելի ևս մեծ եռանդով նուիրել մեր բոլոր ոյժերը մեր մեծ և ազնիւ հայրենիքի ներքին վերակազմութեան, որին մինչև այժմ պակասում էր միայն ազատութիւնը, բոլոր քաղաքացիների հաւասարութիւնը և արդարութիւնը ամենքի համար, որպէսզի իր պատուաւոր տեղը գրաւէ քաղաքակիրթ ազգերի միջև»։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ

—

Անցեալ տարվայ սեպտեմբեր ամսին, երբ ես գտնվում էի Պետերբուրգում, առիթ ունեցայ տեսնելու Ստ. Գուլիշամբարեանցի հետ և խօսելու մեր երկրում բացված ջուլհակութեան արհեստանոցների մասին։

Ս. Գուլիշամբարեանը հետաքրքրվեց և վերցրեց ինձնից նախնական մի քանի տեղեկութիւններ, որոնք անհրաժեշտ են արհեստանոցներ բանալու համար։ Այնուհետև մի անգամ էլ դիմեց ինձ իր ազգական Իսահակ Գուլիշամբարեանի միջոցով ստանալու լրացուցիչ տեղեկութիւններ։

Ներկայ յունվարի սկզբին Գուլիշամբարեանը եկաւ Թիֆլիս և նորից խորհրդակցեց քննութեան ենթարկելով ջուլհականոցների բացման խնդիրը։ Այնուհետև ուղևորվեց Գօրի՝ խօսելու այնտեղի հասարակութեան ներկայացուցիչների հետ. միևնոյն ժամանակ իր մօտ հրաւիրեց և Ցխինվալ աւանի ներկայացուցիչներին։

Գօրիից և Ցխինվալից այդ ներկայացուցիչներից մի քանիսը՝ Ս. Տէր-Յարութիւնեան Գօրիից և Ն. Տէր-Ստեփանեան Ցխինվալից, եկան Թիֆլիս ինձ մօտ մանրամասն տեղեկութիւններ ստանալու ջուլհականոցների բացման անհրաժեշտ ծախքերի, կըրթական գործի կազմակերպութեան և արհեստանոցների կառավարութեան մասին։ Բոլոր տեղեկութիւնները տրվեցին։

Ներկայացուցիչները վերադարձան Գօրի և խորհրդակցեցին Գուլիշամբարեանի հետ։

Գուլիշամբարեանը խոստացաւ սկզբում բանալ արհեստանոցներ փոքր դիրքով մինչև կը պարզվի արդիւնքը։

Վերադառնալով Թիֆլիս Գուլիշամբարեանը, վերջին անգամ խորհրդակցելով ինձ հետ, որոշեց հոգալ Գօրիի և Ցխինվալի ջուլհականոցների ծախքերը առաջին կիսամեակում և խնդրեց, որ Թիֆլիսի Հայ Տընտեսագործական Ընկերութիւնը իր վրա վերցնի բոլոր ղեկավարութիւնը, ստանալով ծախքերի համար անհրաժեշտ դումար։

Միևնոյն ժամանակ Ցխինվալի հասարակութեան ներկայացուցիչ Տէր-Ստեփանեանը, որ վերցրել էր ինձնից ջուլհականոցների պատրաստած գործիքների նմուշներ, անում է մի քանի ժողովներ Ցխինվալում և բացատրում ջուլհակութեան արհեստի օգտակարութիւնը։

Ժողովականները համակրութեամբ վերաբերվում են գործին և նրանցից յիսուն հոգի անդամ գրվելով Տնտեսագործական Ընկերութեան՝ կազմում են պաշտօնական արձանագրութիւն և դիմում Թիֆլիսի Հայ Տնտեսագործական Ընկերութեան վարչութեանը բանալու Ցխինվալում ընկերութեան ճիւղ և ճանաչելու նրանց այդ ճիւղի անդամներ։

Այդպիսով Գօրու գաւառում հիմնվում են երկու ջուլհականոցներ, որոնք պէտք է տարածեն նոր արհեստը ազգաբնակութեան մէջ։

Թիֆլիսի Հայ Տնտեսագործական Ընկերութեան վարչութիւնը ներկայումս զբաղված է այդ արհեստանոցների կազմակերպութեան և վարպետներ հայթայթելու գործով։

Ա. Քալանթար

ՌՈՒՍԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Ով ուզում է տեսնել, թէ ինչպիսի այլանդակութիւն է տիրում այսօր ռուսական իրականութեան մէջ, պէտք է անշեղ հետևէ լրագրութեանը, որովհետև ամեն մի լաւ ու վատ երևոյթ ապաւորվում է նրա էջերում այնպէս, ինչպէս պրօժեկտօրներում, սինեմատոգրաֆներում։

Նրանք վկայում են, որ բարքերի ու հասկացողութիւնների խուլիգանութիւնը բուն է դրել ոչ միայն հասարակական ստորին խաւերում, այլ և պատկառելի հաստատութիւնների մէջ, և մինչև իսկ ինտելիգենցիայի շրջանում։

Օրինակ՝ ինչ անուն կարելի է տալ այն ինտելիգենտներին, այն գրական-գեղարուեստական գործիչներին, որոնք իրանց էստետիկական ձգտումների մէջ չեն խորշում ընդօրինակել նաև փողոցային բարքերը։

Եւ այդպիսի ինտելիգենտ մարդկանց, գրական գործիչների արտակարգ մի նմուշը, սրանից մի քանի օր առաջ, փայլել է Մոսկվայի գրական-գեղարուեստական կրուժօկում։

Վեսչեսլավ Իվանովը յունվարի 27-ին այդտեղ կարդում է մի ռեֆերատ «Ռուսական գաղափարը» թեմայով։

Ն. Բիրզեայով և Անդրէյ Բելէյ տարակելով ռեֆերենտին՝ միևնոյն ժամանակ գովաբանում են։

Բայց Բելէյից յետոյ խօսքը վերապահվում է Տիշչենկոյին։

Վերջինս խիստ կերպով յարձակվելով դեկադենտների վրա, ի միջի այլոց, նկատում է, որ կրուժօկում զրոյցները տարօրինակ ձև են ստանում. դեկադենտը, երբ ռեֆերատ է կարդում, իր հետ բերում է ուրիշ դեկադենտներ, որոնք և նրան գովաբանում են։

Ուրիշ խօսքով, Տիշչենկոն դրանով ուզում էր ասել, որ դեկադենտ-ռեֆերենտ Իվանովը իր հետ բերել է դեկադենտ Բիրզեայեվին և Բելէյին, որպէսզի իրան գովաբանեն։

— Դուք ստում էք,— բղաւում է իր նըստած տեղից Բելէյը։

Տիշչենկոն կրկնում է իր մեղադրանքը։

— Դուք ստում էք, ստոր,—պատասխանում է Բելէյը։

Այդ արտասովոր սկանդալը անգին աղմուկ է առաջ բերում։ Վարագոյրը իջնում է, և հասարակութիւնը զայրացած սկսում է ցրվել։

Գրական-գեղարուեստական կրուժօկի անդամ Բելէյը, անշուշտ, պարտաւոր էր մարդավայել միջոցի դիմել այդ մեղադրանքից պաշտպանվելու համար, քան թէ «ստոր» ու «ստում էք» հայհոյանքները հրապարակօրէն ուղղել Տիշչենկոյին։

Իսկ ինչպիսի հայհոյական գոհարներ պիտի թափէր դեկադենտ Բելէյը, եթէ Տիշչենկոն աւելացնէր նաև, որ նրանք «կլակեօրներ» էլ են բերում։

Որքան ընորոշ է ու ցաւալի Տիշչենկոյի խուլարկուական այդ կասկածոտութիւնը, կրկնակի ցաւալի է Բելէյի վարմունքը։

Ժբրաղդաբար դա պէտք էր, կարծես, որպէսզի ապացուցվի այն աններդաշնակութիւնը, որ տիրում էր ներկայումս ժողովային հետամուտ գործիչների ճոճուն խօսքերի ու իսկական գործերի միջև։

Թէ որքան վնասակար է առհասարակ պաշտօնական կամայականութիւնն ու ձևամոլութիւնը, ինչպիսի քարասրտութիւն ու սպանիչ մթնոլորտ է ստեղծում նա, մանաւանդ դպրոցական կեանքում, երևում է հետևեալ ուշագրաւ օրինակից։

Զիտոպոլի պրոգիմնազիայում ծառայում էր յոգնաւով հիանդ Պետրով-Դրեաիլովը դաստիարակի օգնականի պաշտօնով։ Այդ հիւանդութիւնը հնարաւորութիւն չէ տալիս նրան՝ ծունկ չոքելու եկեղեցական արարողութեան ժամանակ, ինչպէս որ հրամայել էր տեսուչ Վ. Բումեանցեվը։

Վերջինիս դուր չէ գալիս այդ բացառութիւնը, որ կարող էր աշակերտների համար վատ օրինակ լինել, ուստի սպառնալիքներով պահանջում է անշեղ կատարել իր հրամանը։

— Ոտքերիս ցաւերը չեն թոյլ տալիս ինձ ծունկ չոքել,—բացատրում է Պետրով-Դրեաիլովը տեսչին,—ես կը բացատրեմ աշակերտներին՝ թէ ինչու ծունկ չեմ չոքում։

Բումեանցեվը անդրդուելի էր։

Դաստիարակի օգնականը ստիպված եղաւ, անախորժութիւններից խուսափելու

նպատակով, բժշկական վկայական ներկայացնել։

Բայց ինչ արժէք կարող էր ունենալ սամօդուր տեսչի վերաւորված ինքնասիրութեան առաջ բժշկական վկայականը։

Եւ յունվարի 10-ին Պետրով-Դրեախլովը արձակվում է իր պաշտօնից։

Ռէակցիայի ներկայ սև յաղթանակների օրերում տեսչի այդ անխիղճ վարմունքի դէմ ձայն-ծպտուն անգամ հանել կը համարձակվի՞, արդեօք, «անհանդուրժողութեան մէջ» մեղադրվող ծառայողը, թէկուզ արդարութիւնը նրա կողմն էլ լինի։

Սակայն տեսչի քաջասրտութեան արդիւնքը սոսկալի է։

Մի ահագին ընտանիք, «Руль» լրագրի ասելով, այսօր մնացել է առանց կտոր հացի։

Աշխատակից

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ

—

Մարդկային կեանքը զեկավարվում է իդէալներով կամ գաղափարներով, որոնց հիմնական կէտը կազմում է ձգտումն դէպի «դեղեցիկը», «ազնիւը» և «ճշմարիտը»—գաղափարներ, որոնք կազմում են մարդկային ազգի առաջադիմութեան վերջնական նպատակը։ Այս հիմնական գաղափարների շուրջն են պտտում միւս մնացած գաղափարները, ինչպէս, օրինակ, «բարութեան», «արդարութեան», «բարոյականութեան» և այլն։ Նայելով թէ մարդիկ ինչպէս են հասկանում ու բացատրում գաղափարներն իրանց տէսակէտից՝ ըստ այնմ էլ առաջ են գալիս կուսակցութիւնները, այսինքն՝ մարդկանց գաղափարով միմեանց հակառակ խմբերը կամ բանակները, որոնք տարբեր կարծիքներ ունենալով գաղափարների մասին՝ տարբեր ճանապարհներով ու միջոցներով էլ ձգտում են հասնել այդ գաղափարներին, որոնց հիմնական կէտը, ինչպէս վերև ասացինք, կազմում է մարդկային ազգի վերջնական նպատակը։ Սրանից մենք պարզ տեսնում ենք, որ կուսակցութիւններն իսկապէս առաջ գալով մարդկանց գաղափարների մասին կազմած տարբեր հասկացողութիւններից՝ պէտք է հիմնված լինեն և՛ գաղափարների վրա և ոչ թէ մարդկանց դէպի միմեանց ունեցած յարաբերութիւնների, համակրութեան կամ անհամակրութեան, «հացի խնդրի», շահերի տարբերութեան, այսինքն՝ անձնական հաշիւների վրա և այլն։ Ուրեմն պէտք է տարբերել գաղափարական կուսակցութիւնը անձնական կուսակցութիւնից։

Ոչ մի մարդ, եթէ նա ունի առողջ դատողութիւն, չէ կարող մերժել գաղափարական կուսակցութիւնների տուած օգուտը, որովհետև կուսակցութիւնն այդ մտքով իսկապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ մրցումն գաղափարների ապարէզում։ Եթէ չը լինէին կուսակցութիւնները, գուցէ եւրոպական պետութիւնները կուլտուրայի, քաղաքակրթութեան այն բարձրութեանը չը հասնէին, որի վրա կանգնած են ներկայումս։ Եւ արդարև ինչ պէտք է լինի այն կեանքը, ուր չը կայ մրցումն, որ կենդանութիւն է տալիս նրան,—ի հարկէ թմրած, անկենդանութեան մատնված։ Մենք ուրախ պէտք է լինենք, որ մեր մէջ ևս կուսակցութիւններ առաջ եկան և գոյութիւն ունեն այժմ, բայց միւս կողմից պէտք է տխրենք, երբ տեսնում ենք, որ այդ կուսակցութիւնները շատ տեղերում և շատ անձերի մօտ իսկապէս հիմնված են անձնական հաշիւների վրա։ Ահա պատկերի տխուր կողմը, որ կուրացնելով մարդկանց՝ անընդունակ է դարձնում նրանց ըմբռնելու այն գաղափարները, որոնց կոչված են ծառայելու։ Այդ դէպքում նրանք սկսում են գաղափարների քօղով քօղարկել իրանց անձնական ստոր հակումները։ Թուցէք մեզ այնպիսի մարդկանց անուններ, որոնք նուիրված իրանց փայփայած գաղափարներին՝ գործէին յանուն այդ գաղափարների։ Այդպիսիների թիւը շատ և շատ քիչ է, որոնց կարելի է մատներով թուել և բացառութիւն համարել։ Դրանք նմանում են այն մարդարտին, որ կուլ է գնացած անյատակ ծովի կատաղի ալիքներին։ Իսկ այն ինչ՝ շատ և շատ է նրանց թիւը, որոնք գաղափարական քօղի տակ ծածկում են իրանց անձնականը։ Նայեցէք ձեր շուրջը, և ձեր հայեացքն ամեն քայլափոխում կը հանդիպի այդպիսիներին։

Մինչդեռ գաղափարական կուսակցութիւնը բարձրացնում է և իդէալացնում է մարդկային կեանքը, «անձնականը» ստորացնում և անկման է հասցնում նրան։ Եւ որպէսզի գաղափարական կուսակցութիւնը զօրեղանայ և թագաւորէ մի որևէ ազգի մէջ, դրա համար հարկաւոր է այդ ազգի հասնելն այն գիտակցութեան, որ կարողանայ որոշել ոչ միայն «գաղափարականը» «անձնականից», այլ և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանել այն՝ կեանքի ամեն քայլափոխում։ Այդ ցանկալի հետևանքին հասնելու համար այն ոգով պէտք է կրթել մատաղ սերունդը, որի այս կամ այն տեսակ կրթութիւնից ուժգնագոյն կախված է մի որևէ ազգի բաղդը։ Ուրեմն ձգտենք և ջանանք կրթել մեր մատաղ սերունդն այնպէս, որ նա «գաղափարական» լինի, «գաղափարով» գործի և գերադասի «գաղափարականն» «անձնականից» կեանքի բոլոր հանգամանքներում։ Եւ միայն այդ ճանապարհով կարելի է ճշմարիտ քաղաքակրթութեան զարգացման հասնել։

Խ. Բարայեան

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

—

Երկուշաբթի, փետրվարի 9-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի նիստում քննվեց գըլխաւորապէս ուղրավայի զեկուցումը՝ քաղաքի հասարակաց տների և պոռնկութեան վրա հսկողութիւն նշանակելու մասին։ Այս հարցը արծարծված է տասն տարուց ի վեր և մինչև այսօր դեռ լուծումն չէ գտել։ Քաղաքային ինքնավարութիւնը վաղուց ձգտում է պոռնկութեան վրա հսկողութեան գործը իր ձեռքում կենտրոնացնելու, բայց այդ ջանքերը ապարդիւն են անցնում։ Ժողովրդական առողջութեան մասնաժողովը, որ գործում է քաղաքային ինքնավարութեան կից, վաղուց մշակել է մի ծրագիր այդ հսկողութեան մասին, բայց Թիֆլիսի նահանգական իշխանութիւնը անհնարին է գտել ընդունել և հաստատել այդ ծրագիրը, որովհետև ներքին գործերի մինիստրութեան հրահանգով պոռնկութեան վրա հսկողութեան գործը չէ կարող ամբողջովին գտնվել քաղաքային ինքնավարութեան ձեռքում, այլ դրա համար կայ հաստատված յատուկ կանոնադրութիւն, որով պէտք է զեկավարվի քաղաքային ինքնավարութիւնը։

Դուման, երկար վիճաբանութիւններից յետոյ, որոշեց ընդունել մինիստրութեան կանոնադրութիւնը այն պայմանով, որ վերահսկող մասնաժողովի կազմի մէջ մտնեն քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները և սանիտարա-բժշկական տեսուչը։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Այս վերջին օրերը Թիֆլիսի ժողովրդական համալսարանի ընկերութեան նորակազմ վարչութիւնը երկու անգամ նիստ կազմելով, զբաղվեց այն հարցով, թէ ինչպէս վերակենդանացնել դասախօսութիւնների գործը։ Հաստատվեց այն իրողութիւնը, որ հետաքրքրութիւնը դէպի ժողովրդական համալսարանը և դասախօսութիւնները զգալի կերպով թուլացաւ այն օրից, երբ արգելվեցին դասախօսութիւնները տեղական լեզուներով։ Հաստատվեց և այն իրողութիւնը, որ տեղական կամ ազգային սեկցիաներից շատերը գրեթէ կազմալուծված են, և որոշվեց՝ 1) աշխատել ամեն կերպ ձեռք բերել տեղական լեզուներով դասախօսութիւններ կարդալու թոյլտուութիւն, 2) վերակազմել ազգային սեկցիաները, 3) աւելացնել անդամների թիւը, 4) ի մօտոյ ծանօթանալ գրագիտութիւն ուսուցանող և ընկերութեան հաշուով պահվող դպրոցների հետ, որոնց թիւը այժմ 5 է։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Ախալցխա, 2 փետրվարի

Կիրակի, ամսիս 1-ին, Կարապետեան դըպրոցում տեղի ունեցաւ ծնողական ժողով, որին ներկայ էր 200-ից աւելի երկսեռ հասարակութիւն։ Դասախօսեցին ազգ. ուսուցիչ Գ. Տէր-Յակովբեան և Եղիսաբէթեան դպրոցի աւագ վարժուհի օր. Սոֆիա Գալաշեան մաքուր հայերէն լեզուով։

Légo

—

Հին-Նախիջևան, 2 փետրվարի

Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. տեղական ճիւղը բացել է այստեղ գրադարան-ընթերցարան և ձեռնարկել է մի շարք ներկայացումներ տալու այս տարի։ Այստեղ է գտնվում դերասան Օհանեանը, որ նորերս տուաց «Կենդանի Մեռեալներ» պիէսան։ Գրադարան-ընթերցարանի վարչութիւնը խնդրում է հեղինակներին և թարգմանիչներին մի-մի օրինակ իրանց գրքերից նուիրել։

Ա. Պ.

—

Վարանդա, 2 փետրվարի

Դահրազեցի 3 երիտասարդներ՝ Արսէն Շահնազարեան, Հայկ Գրիգորեան և Խաչ. Գրիգորեան, յայտնի իրանց շանտաժներով, յունվարի 28-ին գնում են հարևան Վարաղաբոյն գիւղը և Արամ անունով մի երիտասարդի համոզում իրանց հետ գնալ էժան գնով գողացած տաւար առնել։ Մի ձորում սպանում են Արամին, թալանում փողը և զէնքը և վերադառնում Դահրազ։ Հայերը, գտնելով Արամի դիակը, կասկածում են հարևան թուրքերի վրա՝ նրա սպանութեան մէջ, և յարաբերութիւնները լարվում են, բայց, շնորհիւ տանուտէր Կարապետ Աբրահամեանի ճարպիկութեան, իսկական ոճրագործները յայտնվում են և յանձնվում իշխանութեան ձեռքը։

Վարանդեցի

—

Պետրովսկ, 6 փետրվարի

Մօտ 60 տնից բաղկացած Պետրովսկի հայ գաղութը պահում է մի դպրոց, որ ունի 36 երկսեռ սաներ։ Գաղութը վճարում է պարտադիր տուրք։ Մնացածը հայթայթում են ներկայացումներ, երեկոյթ տալով և այլ նուէրներով։ Ամսիս 5-ին կայացաւ դպրոցում մանկական «հանդէս-բազար»։ աշակերտուհիները երգում էին։ ուսուցիչ Գ. Մ. կարդաց մի դասախօսութիւն։ կարդացվեց և դպրոցի մնտեսական-ուսումն. մասի տեղեկագիրը։ Զուտ արդիւնք մնաց 80 ռուբլի։

***

—

Կարս, 1 փետրվարի

Անցեալ տարի «Զանգակ» թերթի մէջ (№ 34) տպված թղթակցութիւնը, որ որակել էր տեղիս հայ-կաթոլիկ ժողովրդի այժմեան առաջնորդ Պետրոս վարդապետ Բերդիկեանին տգէտ, շահասէր և խռովարար տիտղոսներով, միանգամայն հեռու է ճշմարտութիւնից։ հասարակութիւնը հարկադրեց թղթակից Ոսկանին ապացուցանել իր մեղադրանքները դեռ մի քանի ամիս առաջ, բայց նա մինչև այսօր չը ներկայացրեց ոչ մի ապացոյց, ուստի և ժողովրդի համակրութիւնը դէպի իր առաջնորդը աւելի սաստկացաւ։

Ս. Ա.

—

Մերվ, 3 փետրվարի

Այստեղի հայ գաղութի մէջ հանգանակվեց 113 ր. 5 կ. յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովեալների և յունվարի 13-ին ուղարկվեց «Դործ»-ի խմբագրութեան յանձնելու Հանգանակիչ Մասնաժողովին։

Մանասէ

—

Բագու, 4 յունվարի

Քաղաքիս ունևոր և վաճառական դասը սարսափի մէջ է։ Նոր քաղաքապետ Մարտինովի հռչակը թէև վերջին օրերում մի քիչ հանգստութիւն էր պատճառել հասարակութեանը, սակայն վաճառական Աբրահամեանի գերվելը նոր սարսափների պատճառ դարձաւ։

Հարուստները հեռանում են քաղաքից, շատերը կրճատում են առևտրական և արդիւնաբերական գործերը։ Դրութիւնը, մանաւանդ աշխատաւոր դասի համար, չափազանց ցաւալի պիտի լինի։

Քաղաքում խօսում են ընդհանուր գործադուլի մասին, այն է փակել բոլոր վաճառատները, գրասենեակները, կանգնեցնել արդիւնաբերական բոլոր աշխատանքները, որպէսզի այդպիսով հրաւիրեն կառավարութեան լուրջ ուշադրութիւնը և քաղ. վարչ. ստիպեն գործի անցնելու։

Աբրահամեանին գերել են յայտնի, բազմամարդ փողոցում, իր գործակատարների ներկայութեամբ, որոնք ոչխարի պէս կանգնած մնացել են։

Եթէ ասելու լինենք, որ այդպիսի հասարակութիւնը արժանի է շանտաժիստներին գերի լինելուն, չը պիտի մեղ մեղադրեն, որովհետև Բագուի հասարակութիւնը, մանաւանդ հայ հասարակութիւնը, ոչ թէ քաղաքացի անունը կրելու արժանի չէ, այլ և շատ ստոր է կանգնած։ Բազմամարդ փողոցում գերել մարդու, և մարդիկ այդ տեսնեն ու ձայն չը հանեն,—մթէ մարդ կոչվելու արժանի են այդպիսիները...

Մի խօսքով՝ եթէ օր առաջ վերջ չը դրվի, մի ամվայ ընթացքում Բագուն գաւառական քաղաքների կերպարանք կը ստանայ։

Երէկ երեկոյեան կայարանի մօտ, «Անգլիա» հիւրանոցի անկիւնում երկու հարբած ալէքսանդրոպոլցի հայեր վէճի բռնվելով մէկը միւսին գլորեց ցած և փոքրիկ դաշոյնով մորթեց։

Մարդասպանը փախչելու ժամանակ քաղաքապահը հետապնդեց նրան և ատրճանակից կրակելով վիրաւորեց։ Վիրաւորն ուղարկվեց հիւանդանոց։

Նու-Շիրվան

ՊԷՏՔ Է ՇՏԱՊԵԼ

—

Մինչև սև աղջկայ զարդարվելը հարսանիքը կը վերջանայ...

Ժող. առած

Շուտով կը լրանայ մի ամիսը, երբ Բագուի քաղաքային վարչութիւնը որոշեց ակտիվ կերպով կռուել դրամաշորթների դէմ և, ինչպէս «Մշակի» ընթերցողները գիտեն, այդ մասին լիազօրութիւն ստացվեց Փոխարքայից։

Սակայն մեր քաղաքային վարչութիւնը և քաղաքացիք կարծես սև աղջկայ նման զարդարվելիս լինեն. մինչ նրանք կը մտածեն, կը ժողովեն, կը խորհրդակցեն և կը կարդան իրանց աւետարանը, «ոչխարը սարից անց կը կենայ»։

Քաղաքային վարչութիւնը մի երկու անգամ ժողով գումարելով լռեց, որից ոգևորվեցին շանտաժիստները, և ահա յունվարի 1-ի երեկոյեան վաճառական Աբրահամեանը իր վաճառատունը կողպելով վերադառնում է տուն (երեկոյեան 7 ժամին), բայց նրան փողոցից գողանում, անյայտացնում են։ Դա այն ժամանակն է, երբ քաղաքացիք պատրաստվում են յուսահատական կռիւ մղել շանտաժի դէմ, սակայն, ըստ երևոյթին, վերջիններս ի նկատի առնելով քաղաքային վարչութեան անտարբերութիւնը՝ արհամարհելով շարունակում են իրանց արհեստը։

Պարոններ, պէտք է շտապել. բօպէն յուսահատական է և թանգ։

Բագու. ***

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ-ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ

—

Թէ առաջին և թէ երկրորդ Պետական Դումայում զեկավարող դերը, ինչպէս յայտնի է, պատկանում էր սահմանադիր-ռամկավարներին, որոնք ճնշող մեծամասնութիւն կազմելով երկրի օրէնսդրական գործը առաջ էին տանում ժողովրդական իսկական շահերի համաձայն, ազատամիտ ոյժերի ձգտումների լայն ուղղութեամբ։

Երրորդ Դումայում, ուր, կառավարութեան ստեղծած ընտրողական նոր օրէնքի և օպոզիցիայի ազատ պայքարը դէմ յարուցած զանազան խոչընդոտների ու հալածանքների շնորհիւ, մեծամասնութիւնը անցաւ հոկտեմբերեանների կողմը, սահմանադիր-ռամկավարների դերը զեկավարութիւնից իջաւ սոսկ քննադատողի դերութեան։

Աջակողմեանների ու հոկտեմբերեանների յարմարողական, կառավարութեանը կամակատարելու և իսկական ռուս մարդկանց սպասաւորելու ու իրանց չը համակերպող օպոզիցիային մի-ցաւալ ոյժերով զիմազրաւելու գործելակերպի հանդէպ կադետների դերը անշուշտ պէտք է որոշ փոփոխութեան ենթարկվէր։

Եւ, ըստ երևոյթին «Сдово» լրագրի տուած տեղեկութիւնների համաձայն, այդպէս էլ տեղի է ունենում։

Իրանց դերը Դումայում, յիշեալ թերթի ասելով, սահմանադիր-ռամկավարականները ներկայումս տեսնում են նրանում, որ նրանք հնարաւորութեան չափ պէտք է դիմադրութիւն ցոյց տան կենտրոնի (հոկտեմբերեանների) և աջակողմեանների ամեն մի ձգտումին՝ վատթարացնելու այժմվայ իրերի դրութիւնը։

— Մենք,—ասում են կադետ պատգամաւորները,—զօրաբանակի առաջապահներն ենք. ժամանակաւորապէս պարտութիւն կրեցինք և այժմ ծածկում ենք նահանջումը դէպի դիրքերը, որպէսզի նորից հաւաքենք մեր ոյժերը... Այն բռնութիւնը, որ երևան են հանում մեր վերաբերմամբ հոկտեմբերեանները ու աջակողմեանները, հաղիւ թէ աջողութեամբ պակվի։ Մենք մեր գործը անելու ենք։ Մանաւանդ որ հոկտեմբերեանների համար անհնարին էլ է բոլորովին հեռացնել օպոզիցիան օրէնսդրական այն աշխատանքից, որը նրանք անկարող են միայնակ կատարել։

ՊՈՒՐԻՇԿԵՎԻՉԻ ՄԻ ՆՈՐ ՎԱՐՄՈՒՆՔԸ

—

Յայտնի հասարակական գործիչ Աննա Պաւլովնա Ֆիլոսոֆովան քաղաքային պօստով ստացել է հետևեալ նամակը, գրված «Տաւրիկեան պալատ»-ը կրող բլանկի վրա։

«Թոյլ տուէք արտայայտելու ձեզ, տիկին, խորին բաւականութեանս զգացմունքը մեծագոյն համառուսական հոգևոր բ...-ի փակման առիթով (passez moi le mot. Բայց չէ՞ որ դուք կողմնակից էք ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ընտրութեան, իսկ մենք, պլեբէյներս, բոլորս բիրտ ժողովուրդ ենք), որպիսին էր համառուսական կանոնց համագումարը։

«Կարդացի ու զարմացայ՝ թէ որքան բէօ-ընտանեկան տականքներ են առաջ եկել Ռուսաստանում, եթէ նա կարիք զգայ այնքան շատ ժամանակ լեզուապոռնկութիւն անելու։ Պատգամաւոր Վլադ. Պուրիշկեվիչ։ 16 դեկտեմբերի 1908 թ., Պետերբուրգ»։

Այդ նամակը գրված է «Պետական Դումայի» վերնագիրը կրող ծրարում և վրան գրված է. «Նորին գերազանցութեան Ա. Պ. Ֆիլոսոֆովային՝ կանանց համառուսական համագումարի կազմակերպողին»։

Ի նկատի առնելով 1) որ այդ նամակում Ֆիլոսոֆովային իբրև կանանց համագումարի կազմակերպողին ուղղված «հոգևոր բ...» հայհոյանքը վերաբերում է ամենագեհենիկների թէին ոչ միայն կրթված դասի տեսակէտով, այլ և ժողովրդական լայն մասսաների, որովհետև այդպէս այժմ հայհոյում են միայն հասարակական տականքների շրջանում, 2) որ այդ հայհոյանքը ուղղված է ընդհանուր յարգանք վայելող, այն էլ զառաջեալ տարիքի, մի կնոջ հասցէին, 3) որ այդ հայհոյողը օրէնսդրական հաստատութեան անդամի բարձր կոչումն ունի և 4) որ այդ բարձր կոչումն ունեցող անձը հարկաւոր է համարել ստորագրել մի այդ տեսակ անվայել հայհոյանքի տակ,—երդուեալ-հաւատարմատար Օ. Օ. Գրուզենբերգը Ա. Պ. Ֆիլոսոֆովայի անունից գանգատ է ներկայացրել Պետերբուրգի 47-րդ մասի հաշտարար դատաւորին Պուրիշկեվիչին պատասխանատուութեան ենթարկելու համար։ («Рѣчь»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Փետրվարի 9-ին Թիֆլիսի նահանգական դատարանի 1-ին քրէական բաժնում դնրաց քննվեց «Ходите въ свѣтъ» շաբաթաթերթի նախկին խմբագիր Էլչանինովի գործը, մեղադրվելով մամուլի օրէնքները խախտելու մէջ։

Մեղադրեալը դատարանում իրան մեղաւոր չը ճանաչեց և բացատրեց, որ այն յօդուածը, որի համար նա պատասխանատուութեան է ենթարկվում, չէ կարդացել և թերթի մէջ մտել է անզգուշութիւնից։

Պաշտպան երդ.-հաւատ. Շաբուրովը դատարանից խնդրեց արդարացնել մեղադրվողին։

Դատարանը Էլչանինովին դատապարտեց 5 ռուբլի տուգանքի կամ մի օրով ոստիկանատանը նստելու։

ՅՕԳՈՒՏ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ

—

Ստացանք—1) Կօկանդից, հայ հասարակութիւնից, Զաքար Տէր-Զաքարեանցի և Բ. Քոչարեանցի միջոցով 160 ր., 2) Հին-Ղրիմից, Դաւիթ քահ. Քէշիշեանից, հանգանակած Մուրադեանցի հարսանիքի ժամանակ 12 ր., 3) Խարբինից, Միքայել Գրըձելեանի միջոցով, հանգանակած—133 ր.։

—

ԻՏԱԼԻԱՅԻ ԱՂԷՏԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք—1) Ախալցխայից, Յովհաննէս Գրիգորեանից 1 ր., 2) Կարելի կայարանից, Բարաղամեանից 2 ր.։

Ծանօթ. խմբ.—Մինչև այժմ յօգուտ Իտալիայի աղէտեալների ստացել ենք ընդամենը 39 ր. 88 կ., որ երէկ յանձնեցինք Փոխարքայի դիւանատան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Մինչև օրս Իտալիայի երկրաշարժից վնասվածների օգտին կոմսուհի Վորոնցով-Դաշկովայի նախագահութեամբ գործող յանձնաժողովը ժողովել է ընդամենը 4016 ռուբլի 94 կոպէկ։

✦ Վաղարշապատից մեզ գրում են, որ Էջմիածնի սինօդը որոշել է 100 ր. յատկացնել Իտալիայի աղէտեալների օգտին և այդ գումարն ուղարկել կոմսուհի Վորոնցով-Դաշկովային։

✦ Անցեալ տարի Թիֆլիսում դասախօսութիւններ կարդացող Ալէքսէյ Լիսովսկին վաղը, փետրվարի 12-ին, 13-ին և շաբաթ 14-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում կը կարդայ երեք հատ ակական դասախօսութիւններ հետևեալ թեմայով. «Ազգային գաղափարները ռուսական նոր գրականութեան մէջ»։ 1-ին դասախօսութիւնը նուիրված կը լինի Պուշկինին, երկրորդը Գոգոլին, իսկ երրորդը Չէխովին։ Դասախօսութիւնների սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

✦ Կովկասագիտական բարձր դասընթացքներում այսօր, երեկոյեան ժամը 6-ին, տեղի կունենայ Միխնևիչի համալսարանի դոկտոր Ալ. Դիրրի առաջին դասախօսութիւնը կովկասեան ցեղերի և նրանց Կովկասից դուրս տարածման մասին։ Այս սակաւ հետազօտված հարցը մեր դասախօսները չեն շօշափել, և պ. Դիրրի դասախօսութիւնը, որ հետևանք է գիտական յամառ ուսումնասիրութեան, իր վրա կը դարձնէ մեր ժանկավարժների և Կովկասը ուսումնասիրողների ուշադրութիւնը։ Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն պատկերներ մոգական լապտերով։

✦ Թիֆլիսում բժշկական շուտափոյթ օգնութեան գործի նախագիծը Փոխարքան հաստատեց։

✦ Կովկասի ճանապարհներից մի քանիսը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի հսկողութիւնից վերացնելու և անդրկովկասեան զէմստվոյին յանձնելու հարցը յարուցվել է արդէն պատշաճաւոր շրջաններում։

✦ «Բազմավէպ» ամսագրի յունվարի համարում տպված է «Աղբիւրի» 25-ամեակի առիթով Տիգրան Նազարեանի պատկերը և մի համակրական յօդուած հ. Ներսէս Տ.-ի։

✦ Շաբաթ, փետրվարի 7-ին, Մանթաշեան առևտրական դպրոցում կայացաւ գրական-երաժշտական երեկոյթ, բաղկացած երեք մասից։ Ներկայացվեցին ռուսերէն Զեխովի «Յօբելեան» և հայերէն՝ Փառնակէսի «Բանաստեղծ» պիէսները։ Ապա տեղի ունեցաւ գրական-երաժշտական բաժինը՝ ոտանաւորների և առակների ընթերցումը ռուսերէն և տեղական լեզուներով և երաժշտական պիէսների նուագումը։ Երեկոյթը վերջացաւ եւրոպական և ասիական պարերով մասնակցութեամբ աշակերտների, նրանց քոյրերի և ազգականների։ Երեկոյթը բոլոր ներկայ եղողների վրա շատ հաճելի տպաւորութիւն թողեց։ Սաների ծնողները, շնորհակալութիւն մատուցելով փոխ-տեսուչ պ. Բարսեղեանին, ցանկութիւն յայտնեցին յաճախ տեսնել դպրոցում այդ տեսակ հաճելի և օգտաւէտ զուարճութիւններ իրանց մանուկների համար։

✦ Թիֆլիսում փետրվարի 9-ին վախճանվեց կովկասեան զինուորական շրջանի շտաբի զինուորա-տեղագրական բաժնի կառավարիչ գ. լ. Պ. Կուլբերգը։

✦ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհուրդը ստացել է յօգուտ որբանոցի այրի Եկատերինա Ստեփանոզնա Աստուածատրեանից իր հանգուցեալ ամուսնու՝ Իոսիֆ Նիկիտիչի յիշատակին 15 ռուբլի։ Նոյնպէս տիկին Ֆլորա Վարդանեանի միջոցով Հալաբարում հանգանակված թիւրքահայ գաղթականների օգտին 21 ռուբլի։ Տիկին Սալոմէ Ենիկոլոփեանից յօգուտ ընկերութեան ձրի և էժանագին ճաշարանի 25 ռուբլի։ Խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին։

✦ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. խորհուրդը շնորհակալութեամբ ստացել է ինժեներ Գ. Զ. Եարալովի միջոցով հանգուցեալ գեներալ Խօջամինասեանի ժառանգներից յօգուտ ընկ. ձրի և էժանագին ճաշարանի յիսուն ռուբլի (50 ր.)»։

✦ Հայուհեաց որբանոցամ ընկերութեան վարչութիւնը ստացել է նուէր պ. Մկրտիչ Յակոբջանեանի հարսանեաց խնճոյքում կուտակուած 8 ռուբլի։

հանգանակած օր. Նատալիա Յակոբջանեանի միջոցով 21 ր. 40 կոպէկ, մի այլ խընճայքից պ. Արշակ Յովհաննիսեան Սիմոնեանի միջոցով 4 ր.։ Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին, որոնք իրանց ուրախութեան ըօպէներին յիշել են որբուկներին։

✦ Ազօվ-Դոնեան բանկի Թիֆլիսի բաժանմունքը 100 ռուբլի է նուիրել Թիֆլիսի մանմկդպանների բարեգործական ընկերութեան օգտին։

✦ Թիֆլիսի նահանգապետի առաջարկութեամբ արձակվեց քաղաքային առևտրա-տնտեսական մարմնի կառավարչի օգնական Մատիկովը։

✦ Լսվում է, որ Կովկասեան շերամապահական կայարանի կառավարիչ նշանակվելու է Բոսսիկովը։

✦ Այսօր նշանակված է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի նիստը։

✦ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է Իոսիֆ Կարգարետէլուն հրատարակել Թիֆլիսում մի երաժշտական ամսաթերթ վրացերէն լեզուով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Թիֆլիսի ոստիկանապետը յայտարարում է, որ խուզարկու բաժնի կառավարիչ Բեկօզօնի և 2-րդ ոստիկանատան թաղական վերակացու Ցվէրաձէի իբրև նուէր վերցրած 276 ռուբլի 20 կոպէկը և 3 ռուբլին, Թիֆլիսի նահանգապետի թոյլատրութեամբ, ինքն ուղարկել է աքսորականների որդիների ապատարանին, որի մասին յայտնվում է ի գիտութիւն ոստիկանութեան։

✦ Առաջարկված է պրիստաւներին որոնել օրիորդ Մարիա Եանիսիոկէրսկայային, 12 տարեկան, բարձրահասակ, աչքերը կապույտ. գտնելու դէպքում նրան տանել Կսենիէվսկայա փողոց, № 7 տունը, Ուլիանա Գավ. Եանիսիոկէրսկայային։

✦ Փետրվարի 9-ին, Կրայնայա փողոցում, № 15 տնից, Աֆանասի Պանկովի բակից տարել են նրա 200 ռուբլանոց կովը։

✦ Փետրվարի 9-ին ձերբակալվեցին Մօրտուխ Բեկէլը կեղծ 3 ռուբլանոցներ պատրաստելու ժամանակ և Իվան Խանենդրավան, որ աքսորված էր Թիֆլիսի գենեռալ-նահանգապետութեան սահմաններից։

ԼՈՒՐԵՐ ԲԱԹՈՒՄԻՑ

✦ Վարդանանց տօնի առիթով ծխական դպրոցում հանդէս կար, որ սկսվեց առաւօտեան ժամը 11-ից։ Բազմութիւն չը կար։ Խմբական երգեցողութիւնը վատ չէր։ լաւ էին ոտանաւորները։ Ճառախօս ուսուցիչները ամեն կերպ աշխատել էին եկեղեցի, ազգ, հայրենիք, կրօն, հոգևորական բառերն ու իմաստները գործ չածել և բաւական աշխատել էին։ Ընթերցողին ենք թողնում ստածելու, թէ այդ բոլոր օգտակարեստական լոկ հնչիւն կրող ճառերը որքան պատմական կը լինէին և որքան սազական Վարդանանց յիշատակին...

✦ Նոյն օրը, քաղաքային ակմբանացում, տեղի ունեցաւ «Հայկական երեկոյթ», որ գրաւել էր մեծ բազմութիւն։ Երեկոյթը շքեղ չէր և ոչ մեծածախս անցեալների նման։ Երևում էր տնտեսութիւն ամեն բանի մէջ։ Խմբական երգեցողութիւնը գոհացուցիչ էր, սիրուն էին կենդանի պատկերները. գեղեցիկ էր դուրս եկել Մասիսը Նը-կարիչ Խանբէգի վրձինի տակից, որ բաւական շնորհալի աշխատանք էր թափել այդ հանդիսի համար։ Հայկական չէր բալետը... Պէտք է նկատել, որ ընդմիջումները ձանձրոյթ պատճառելու չափ շատ էին ձգձվում։ Շնորհակալութեան արժանի էր տ. Զապէլ Զիլինկիրեանը, որ ահագին ջանք, աշխատանք ու եռանդ էր գործ դրել իր գլխաւորութեան տակ դրվող երեկոյթի վրա։ Զը կային դրսից հրաւիրված արտիստներ, սազանդարներ. աշխատել էին բաւականաչափ տեղական ոյժերով։ Կար և վիճակախաղ։ Սպասվում է 2000 ռուբլուց աւելի զուտ արդիւնք։ Երեկոյթը տեղական լուս. և կաթ. հայ դպրոցների օգտին էր։

✦ Փետրվարի 4-ին խուզարկութեան ենթարկվեց «Շապիրոյի» տպարանը և ապա կնքվեց։ Լոյս տեսնելուց դադարեց այնտեղ տպագրվող «Батумскій Голосъ» թերթը։

ՄԱՄՈՒԼ

«Մանզումէի էֆքեար» թերթը, տպել է Նորերս Ա. Ատովմանի «Կուսակցութիւնները գաւառին մէջ» վերնագրով հետևեալ յօդուածը.

«Մանզումէի» 2285 թիւին մէջ «Կուսակցութիւնները գաւառին մէջ» յօդուածով մը ցաւ յայտած էիք գաւառներու մէջ տեղի ունեցած կուսակցական կամ աւելի ճիշտը անձնական պայքարներու մասին։ Այո, այս պայքարները նոյնպես տեղի կունենան Մեծ-Նոր գիւղի, Միջագիւղի, Զէնգիլէրի և շրջակայ ուրիշ հայաշատ գիւղերու մէջ իրենց ծայրայեղութիւնով. «Դիրօշակն» ու «Հնչակը» երկար պայքարներու և ատելութիւններու դուռ են բացած գիւղացի ռամիկ և զարգացեալ դասակարգերու մէջ. ամեն օր նորնոր կուսակցական ցաւալի միջադէպեր կը պատահին, և այնքան կաւելնայ, կը խորունկնայ իրենց միջև բացուած ատելութեան խրամը, որ պիտի համարձակէի ըսել թէ կրնայ նոյնիսկ սպանութիւններու ծնունդ տալ։ Ահա այս եղելութիւններէն մէկ քանին։ Անցեալները Վեր. Հնչակեան կուսակցութիւնը Միջագիւղ թատերախումբ մը բերելով կորոշէ գիւղիս դպրոցի սրահին մէջ ի նպաստ իր կուսակցութեան ներկայացում մը տալ. խնամակալութենէն երկուքը, որոնք նոյն ընկերութեան անդամ էին, կը հաւանին. մինչդեռ միւսը և քահանաները ինչ-ինչ իրաւացի պատճառներով կընդդիմանան։ Վեր. հնչակեանները կը բարկանան, կը զայրանան, կը փրփրին և մէջերնէն մէկը նոյնիսկ կը համարձակի ըսել. «Եթէ գիւղացիները չթողուն, արիւն պիտի ելնէ»։ Եւ առանց ականջ կախելու գիտողութեանց՝ բեմը կը սկսին շինել դպրոցի սրահին մէջ։ Քահանաներու միջոցաւ խառն ժողով կը գումարուի և միաձայնութիւնով կը մերժուի կրկին անգամ, որով կը սկսի երևելիներու, որոնց միացած էին նաև գիւղացիներ, և վեր. հնչակեաններու մէջն կռիւը. ամբոխը կը խռնուի, ժողովուրդը իրար կանգնի, վեր. հնչակեանները ժողովուրդին կողմէ գտած գօրաւոր ընդդիմութենէն պարտուած կը ստիպուին քաշուիլ և տեղի տալ, և այսպէս առաջը առնուած կըլլայ մեծ դէպքերու։

Հնչակեան և դրօշակեան պայքարը այնքան յառաջ գացած է, որ երկուքն ալ մէկզմէկ կատեն փոխադարձաբար, փոխանակ զիրար սիրելու և գիւղին մէջ համերաշխութիւն տարածելու, ինչ որ կը պահանջէ նաև իրենց կանոնագիրը։ Աւելին կայ, Միջագիւղի մէջ երեք եղբայրներէն երկուքը հնչակեան և միւսը դրօշակեան եղած է։ Հնչակեան երկու եղբայրները միւսին հետ չեն խօսիր, հաց չեն տար, նոյնիսկ կը կռուին ըսելով թէ «ինչու դրօշակեան եղեր է և հնչակեան չըլլար, և այլն»։

Ե՞րբ վերջ պիտի գտնեն այս ցաւալի միջադէպերը. ինչու վերոյիշեալ ընկերութիւններէն ներկայացուցիչներ չեն դրկուիր և համերաշխութիւն քարոզեր նոյնիսկ ժողովրդեան ամեն խաւերու մէջ, քանի որ իրենք էին կուսակցական որոմը ցանողները գիւղերուն մէջ, թէև բարի նպատակով։

Պիտի փափաքէինք որ լուրջ դիտողութեան առնէին այս դէպքերը և ջանային վերջ տալ այլ ևս այս սին և ազգավնաս պայքարներուն։

*

«Բիւզանդիոն» թերթի յունվարի 16-ի համարի մէջ տպված է Մեսրոպ Խաչիկեանի հետևեալ բողոքը.

«Բիւզանդիոնի» մէջ կարդալով որ երէկ Պերայի ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ ընկերներ պիտի առնխօսեն, փափաք զգացի երթալ մասիկ ընել. խուռն բազմութիւն մը կար. ս. բեմին վրայ սեղան մը դրուած էր, վրան շիշ մը ջուր, գաւաթով. բեմը ելան հայ մը, Թիւրք մը և ֆրանսացի մը։ Հայ ազգն այսչափ դարեր՝ պատմութեան մէջ նմանը չտեսնուած հայածանքներ կրելով հանդերձ, իր իսկութիւնը պահեր է, մեծ մասամբ իր կրօնքին շնորհիւ. առանց անոր շատոնց հայ անունը կորսուած էր։ Ամեն հայու նուիրական պարտականութիւնն է իր կրօնքին նախանձախնդիր ըլլալ։ Եթէ անպատճառ այդ առնաբանութիւններն եկեղեցւոյ մէջ պիտի ըլլան, կարելի չէ վարը դասին մէջ մի քանի դրշ. ծախսելով բեմ մը շինել և անկից խօսիլ։ Երկրորդ. ինչ անվայել բան պահարանի մէջ ծխել, ուրկից՝ ֆրանսային ալ համաձակութիւն առնելով սկիզբը բերանն հակաւ դասը բազմեցաւ։ Այդ ազատամիտ պարոններն՝ երբ օտարազգի աղօթատեղի մը գտնուին՝ իրենց վարքով օրինակելի դիրք մը կառնեն, մինչդեռ ըսն իրենց եկեղեցւոյն մէջ՝ ուր պարտին աւելի քաղաքավար ըլլալ՝ տեղի կուտան հայ եկեղեցւոյ վեհութիւնն օտարաց առջև նսեմացնելու։ Մարդ որչափ ազատամիտ ըլլայ՝ ազգային արժանապատուութիւն կրսեն բան մը կայ, զոր պէտք է ունենայ։ Նախ մենք մեզ պատուել գիտնանք որ օտարներն ալ մեզ պատուեն։ Կրօն. ժողովը փոխանակ եռաձայնի կամ միաձայնի հոգ տանելու, այս կարգի անզգուշութեանց առաջն առնել թող աշխատի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գօրի, 27 յունվարի

Գօրու հայոց երկսեռ երկդասեան դպրոցի չքաւոր աշակերտ-աշակերտուհիների օգտին, դեկտ. 13-ին, քաղ. ժողովարանի դահլիճում, կայացած ներկայացում-երեկոյթի հաշիւը։

Մուտք.—184 ր. 45 կ. տոմսակներից, նուէրներից և բուֆէտից։

Ելք.—74 ր. 38 կ. ժողովարանի, օրկեստրի, մարկաների, բեմ շինելու, աֆիշանէրի և այլ ժամը ծախսերի։

Զուտ արդիւնք.— 110 ր. 7 կ., որից դպրոցիս դասական պիտոյքների և տօնածառի համար գործադրվեց 38 ր. 40 կ., չքաւոր աշակերտ-աշակերտուհիների զգեստի և ոտնամանների համար՝ 56 ր. 67 կ., իսկ 15 ր նուիրեցինք վրաց դպրոցի չքաւոր երեխաներին։

Որովհետև այդ ներկայացում-երեկոյթի նախաձեռնողը և կարգադրիչը ես էի, ուստի խորին շնորհակալութիւնս եմ յայտնում, նախ բոլոր սիրողներին և այն յանձնաժողովին, որ ընտրել էի հասարակութիւնից այս գործում ինձ օգնելու, և վրացի սիրողներին, որոնք առաջին առաջարկութեամբ պատրաստակամութիւն յայտնեցին մեր աշխատանքին մասնակցելու։ Առանձին շնորհակալութիւն տ. Վ. Զանոյեանին՝ նրա ինչպէս անօրինակ եռանդով տոմսակներ տարածելու, նոյնպէս բուֆէտում աշխատելու և տուած նուէրների համար։

Աւ.-ուսուցիչ՝ Ղ. Դերենիկեան

—

Կօկանդ, 27 յունվարի

Այսօր փոխադրելով յարգելի խմբագրութեանդ հասցէին Կօկանդի հայ հասարակութիւնից հանգանակած, յօգուտ Զէյթունի սովեալների 160 ր., խնդրում ենք բարեհաճէք ստանալ և յանձնել Հանդանակիչ Մասնաժողովին։

Ի միամտութիւն՝ խնդրում ենք արձանագրել «Մշակի» էջերում նուիրատուների հետևեալ ցուցակը։

Եղբ. Դէորգեանցներ 20 ր., Մ. Աթաբէգեան 10 ր., Բ. Քոչարեանց 10 ր., Եղբ. Զինզեօչեաններ 6 ր., առևտր. տուն «Տարօն» 5 ր., մի ոմն 5 ր., Գ. Մելիքեանց 5 ր., Ա. Յովակիմեանց 5 ր., Մ. Ոսկանեանց 5 ր., Զ. Տէր-Զաքարեանց 5 ր., Կօկանդի ընկ. Գասպարեան-Յարութիւնեան 5 ր., Ա. Դանիէլեանց 5 ր., Գ. Տէր-Սրապիոնեանց 5 ր., Ա. Գասպարեանց 3 ր., Պ. Բաբաջանեանց 3 ր., Կ. Աւագեանց 3 ր., Բ. Յովհաննիսեանց 3 ր., ընկերք Ալէքսանդր 3 ր., Լ. Մելիք-Յուսէյնեանց 3 ր., մի ոմն 3 ր., Մ. Սալամբէգեանց 3 ր., Գ. Միրաքեանց 3 ր., Ա. Հայրապետեան 3 ր., Անդրկասպեան ընկ. 3 ր., Ա. Բէգլարեանց 3 ր., Ա. Ամիրզադեանց 3 ր., Ա. Զաքիեանց 2 ր., Զ. Զարզարեանց 2 ր., Կ. Պարոնեանց 2 ր., Ս. Գարբիէլեանց 2 ր., Պ. Մանուչարեանց 2 ր., Յ. Իսրայէլեանց 2 ր., Դաւիթ Տէր-Զաքարեանց 2 ր., Կ. Զեբիով 2 ր., Մ. Տէր-Բաղդասարեանց 2 ր., Ս. Ծատուրեանց 2 ր., Տէր-Միքայէլեանց 1 ր., Զաքի 1 ր., Ա. Աթայեանց 1 ր., Ա. Մարխանեանց 1 ր., Կ. Միրաքեանց 1 ր., Մ. Օվակեան 1 ր., Ի. Գասպարեանց 1 ր., Ի. Աղամեան 1 ր., Ամինի 1., Յ. Պողոսեանց 50 կ., Յ. Տէր-Դաւթեանց 50 կ.։

Սրտով յայտնում ենք մեր շնորհակալութիւնը Կօկանդի հայ հասարակութեան, որ չը խնայելով իր լուման, հնարաւորութիւն տուեց առժամանակ սրբել տասնեակ երեխաների արտասուքը։

Հոգաբարձուներ՝

Բ. Քոչարեան, Զ. Տէր-Զաքարեան

—

Թիֆլիս, 3 փետրվարի

Կով. Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը բացի մինչև այժմ հրատարակածներից՝ յօգուտ Թիւրքահայ գաղթականների ստացել է նաև հետևեալ գումարները. 1) Տիկ. տիկ. Կիւլպենկեանի, Դ. Յովհաննիսեանի և Քալանթարի միջոցով 200 ր. 10 կ., 2) Ախալքալաքի ճիւղի վարչութենից 66 ր. 50 կ., 3) Ղուբայի ճիւղի վարչութիւնից 5 ր., 4) տիկ. Վարվառէ Ալէքսանդրեանից 10 ր.։ Ընդամենը 281 ր. 60 կ.։ Խորհուրդս ստացել է նաև յօգուտ ընկ. ձրի և էժանագին աշակերտ. ճաշարանի տիկ. Աննա Դէորգեանից 25 ր.։

Խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին և հանգանակող յարգելի տիկիններին և իր յիշեալ ճիւղերին։

Կ. Հ. Բ. Ը. Խորհուրդ

—

Օձուն, 27 յունվարի

Ամսիս 2-ին տեղիս պետ. և ծխ. դպրոցների երկսեռ մանուկների համար տեղի ունեցաւ տօնածառ, որ կազմակերպվել էր մեր տանուտիրոջ կին Տ. Ա. Անտօնօվայի, գրագիր Գացկէի և ուսուց. խմբի ջանքերով։ Տօնածառը, իբրև միանգամայն նոր և չը տեսնված բան մեր գիւղում, լաւ տպաւորութիւն թողեց երեխաների վրա։

Տօնածառը կազմակերպվել է մասնաւոր նուիրատուութիւններով։ Նուիրատուներն են՝ Տ. Գրիգորեվա, Պ. Տէր-Դաւթեան, Ա. Աւլոյեան, իշխ. Դ. Աբեղաղ 5-ական ր., Հ. Շահինեան 3 ր., Ա. Գացկէ, Լ. Ռոստովանեան, Գ. Տէր-Խաչատրեան 2-ական ր., Ն. Շահվերդեան, Վ. Զաւարեան, Ա. Մինասեան, Ի. Աբրահամեան, Ա. Քէշիշեվ, Պ. Քալանթարեան, Դ. Իսահով, Վ. Գօգօբերիձէ, Գ. Պերցեվ 1-ական ր., տէր-Բաղդասար, Ե. Խարազեան, Ս. Մոսինեան, Վ. Բաշբէչուկ-Մելիքեան, Ս. Արովեան, Գ. Խարազեան, Ի. Կուսակին, Ի. Տրելիցկի 50-ական կ., Ա. Յովասափեան 40 կ., Յ. Զերքեչեան 25 կ.։ Բացի այդ՝ հասարակութեան ձեռնհաս անդամները և ծնողները ըստ կարողութեան 10—20-ական կոպէկով նուիրել են 3 ր. 84 կ.։ Ընդամենը 46 ր. 49 կ.։

Ցիշեալ գումարից ծախսված է՝ տօնածառի զարդարանքների վրա 10 ր. 66 կ., չքաւոր աշակերտ-աշակերտուհիների համար գնված է դասական պիտոյքներ՝ 12 ր. 28 կ., երկու դպրոցների համար «Աղբիւր» և «Հասկեր» մանկական թերթերի բաժանորդագին՝ 14 ր., հագուստ չքաւոր երեխաների համար՝ 9 ր. 55 կ.։ Ընդամենը 46 ր. 49 կ.։

Տալով այս հաշիւը, յայտնում ենք մեր շնորհակալիքը տօնածառի ձեռնարկողներին, որոնք չեն խնայել իրանց նիւթական միջոցները և ֆիզիքական ջանքերը, նոյնպէս և այն անձանց, որոնք իրանց նիւթական միջոցներով օգնութեան ձեռք են մեկնել մեր՝ նիւթական և ժաւոր զուարճութիւններից միանգամայն զուրկ մանուկներին։

Կարգադրիչ տօնածառի՝

Татьяна Григорьева

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՆԸ ՄԱՐՕԿԿՈՅԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Վերջին չորս տարիները Գերմանիայի և Ֆրանսիայի միջև, շնորհիւ փոքրիկ Մարօկկոյի, կախված էր պատերազմի ահռելի ուրուականը, որը երբեմն ըօպէից ըօպէ սպառնում էր տխուր իրականութեան փոխվել։ Ամենքը աւելի երկիւղ էին կրում Գերմանիայից, որի իմպուլսիվ թագակրի ձեռքին է veltpolitik-ի (համաշխարհային քաղաքականութեան) դեկը, ի մեծ ցաւ գերմանական պարլամենտի և երկրի գիտակից մասի։

Այժմս երկու պետութիւնների ներկայացուցիչները կնքել են խաղաղ զրաւոր համաձայնութիւն այդ հարց ի վերաբերեալ, և նա արդէն հրատարակված է թերթերում։ Համաձայնութեան մէջ հանդիսաւոր յայտարարվում և ճանաչվում են և՛ Գերմանիայի զուտ վաճառականական շահերը, և Ֆրանսիայի քաղաքական օգուտները ու Մարօկկոյի ամբողջութեան անձեռնմխելիութիւնը։

Մայրաքաղաքի թերթերի ասելով գերմանական լրագիրներն գոհունակութեամբ են խօսում կայացած համաձայնութեան վրա, որ վերջ դրաւ պատերազմի մի սպառնացող առիթի։ Ֆրանսիական մամուլը կատարելապէս հրճուում է։ Անբաւական չեն երևում և վրէժի (րէվանշ) կոչող լիրբ ազդայնականները (մեր սոյիւզնիկների տեսակը Ֆրանսիայում), որոնք, սակայն, սրտի խորքում վախենում են գերմանական զրահաւորված բռունցքից։ Հեռագիրներից յայտնի է անգլիական ազդեցիկ լրագիրների կարծիքը. «Daily Graphic»-ը յայտարարում է, որ ֆրանս-գերմանական համաձայնութիւնը Մարօկկոյում ուրախալի նշան է երկու պետութիւնների հաշտասիրական տրամադրութեան։ Գնացէք նա աշակցի սերտ համաձայնութիւն ստեղծելու երկու հարևանների միջև։ Եւ եթէ հարկաւոր լինի Անգլիայի բարեկամական միջնորդութիւնը՝ նա այդ կանէ մեծ պատրաստակամութեամբ։ Նոյն խնամով գրում է և «Daily Telegraph»-ը։

Պ. Զ.

ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Կիլիկիոյ կաթողիկոսը կը սպասնայ հրաժարիլ.—Կը լսենք թէ Սահակ սրբ. կաթողիկոսը ազգու դիմում մը ըրեր է ազգ. պատրիարքարանի մօտ, պահանջելով որ իր նախորդին՝ հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսին թողած հարստութիւնը (որ օրինաւորապէս կը պատկանի Կիլիկիոյ Աթոռին) անոր ժառանգորդներուն կողմէ դրաւելուն դէմ բողոքուի և այդ ոտնձգութիւնն առաջքն առնուի։ Ս. կաթողիկոսը կը յարէ, թէ ինք, բռնապետութեան օրով, յաջողեցաւ կարգադրել Թլանի ագարակին սեպհականութեան խնդիրը՝ ի նպաստ մայրավանքին, և ցաւալի երևոյթ մը պիտի ըլլար, եթէ արդի ազատութիւն և արդարադատութեան շրջանին մէջ իր նախորդին գործածութիւնները չի վերադարձուէին Կիլիկիոյ կաթողիկոսութեան որ արդէն իսկ նիւթական անձնական վիճակի մէջ կը գտնուի։ Այն պարագային, ուր ազգ. կեդր. փարչութեան կողմէ հարկ եղած ձեռնարկներն ըլլալով ձեռնտա իշխանութեան մօտ՝ նպաստաւոր արդիւնք մը ձեռք չի բերուի, Սահակ կաթողիկոս մտադիր է եղեր հրաժարիլ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

9 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Որովհետև դեռ շարունակում են ամեն կողմից նուէրներ ուղարկել, «Մէսինա-Պետերբուրգ» նպաստամատոյց յանձնաժողովը սրանով յայտարարում է, որ իր գործունէութիւնը նա դադարեցրել է արդէն փետրվարի 1-ին։

Մի օրում խօլերայով հիւանդացան 19, մեռաւ 1 հոգի։

ՕԴԵՍՍԱ։ Գնացքների երթևեկութիւնը հարաւ-արևմտեան գծի վրա վերսկսվեց։ Գիծը շարունակում են մաքրել ձիւնից։ Նաւահանգստում աշխատանքները վերսկսվեցին։

ՏՈՒԼԱ։ Կիէվսկայա փողոցում կինեմատոգրաֆի հրդեհի ժամանակ մահվան դուռը հացրին ոտնատակ տալով 14 հոգու, մօտ 30 հոգի էլ ջարդուածքներ ստացան։

ԿԻԷՎ։ Մի փոքր թուլացած փոթորիկը վերսկսվեց նոր թափով։ Երկաթուղային գծերի վրա պատահում են գնացքների մասնաւոր խորտակման դէպքեր, մի շարք դժբաղդութիւններ գիծը ձիւնից մաքրող բանւորների հետ։ Շատ տեղերում ձիւնը անհնար է մաքրել, որովհետև մեծ քանակութեամբ նորն է գալիս։ Հարաւ-արևմտեան երկաթուղիների կառավարիչ Նեմէշաէվը մեկնեց աշխատանքները ղեկավարելու համար։ Երէկվանից սկսեցին գնացքներ ուղարկել Օդեսա։ Սակայն ճանապարհորդների մեծ մասը մնում է կայարաններում։ Քաղաքի հաղորդակցութիւնը շրջակայքի շատ տեղերի հետ ընդհատված է։ Խճուղիները ձիւնի տակ են թաղվել։ Հանրակառքերը ժիտոմիրից չեն կարողանում գալ։ Դնէպրի շուրջը գտնվող գիւղերը ձիւնի տակն են մնացել։

ԽԷՐՍՕՆ։ Նահանգի արևմտեան մասում սոսկալի փոթորիկ է։ Պօստային հաղորդակցութիւնը կանգ առաւ։

ՏՕՄՍԿ։ Նօվօ-Նիկոլայէվսկում գտան կեղծ դրամներ պատրաստելու արհեստանոց։ Ձերբակալեցին հինգ հոգու։

ԴԵԼՄԱՐ։ Էքսպրէսի խորտակման ժամանակ եօթ պօստային պաշտօնեաներ և երկաթուղային ծառայողներ սպանվեցին։

ԲԵՐԼԻՆ։ Երկրորդ անգամ այցելելու ռուսական ցուցահանդէսը, դահաժառանգի կինը երկար խօսակցեց բաժանմունքի կառավարչի հետ և ուսերէն լեզուով լսեց նրա տուած բացատրութիւնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Բաղու, Լօր գիւղի կուլտուրական ընկերութեան վարչութեան ներկայացուցիչներ Ա. Յովհաննիսեանին և Նիկողայոս Տէր-Գրիգորեանին.—Անկարող ենք տպել ձեր բաց նամակը, ուղղված պ. Ա.-ին։ Նկարող է անձամբ բերանացի բացատրութիւն տալ ձեզ։ Դուք յայտնում էք, որ «Մշակը» միշտ պաշտպան է եղել հայաբնակական շահերին, և պարմանում էք, որ չեն տպում։ Հաւատացէք, որ ոչ թէ աչառութեամբ չենք տպում, այլ գտնում ենք անյարմար որոշ պատճառներով, ուստի յիշուղարկեցինք ձեր նամակը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Արտասահման մեկնելու պատճառով հիւանդների ընդունելութիւնը ընդհատված է։ 50—39
(օ. մ.)

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, ռանտգենագիս ստամոքսի և աղիքների ուսումնասիրութիւններ։
Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան, 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձ 100—9

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ., 5—6 ժ. երեկ.
Վլադիմիրսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—

Առաջարկվում է հրատարակել
ԳՐԻԳՈՐ ԲԱՂԱՍԱՆԵԱՆԻ
«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ»
որի մէջ մտնելու են՝ I. «Մասունցի դիւթ», II. «Առիւծաձև Մհեր», III. «Մելիք և Մանասար», IV. «Ռոստոմ և Զոհրաբ», V. «Պատիկ Մհեր», VI. «Ճօճկան Խուդին» և VII. «Որբիկների արցունքներ» և այլն, ընդամենը շուրջ 400 էջ։ Պայմանների մասին դիմել՝ Шулаверъ, Григ. Баласанянцъ.
(օ. մ.) 122. 3—

ՀԱՋԻԱԳԻՒՏ ԴԷՊՔ

«ԽՐՕՆՕՄԵՏՐ» տեսակի ժամացոյց 6 ր. 75 կոպ. 200 ր. արժէք ունեցող ոսկի ժամացոյցի փոխարէն առաջարկում եմ «Խրոնօմետր» ժամացոյցը, որը ձևով և շքեղութեամբ պակաս չէ ոսկէ ժամացոյցից, որի մետալի և մեխանիզմի լաւ յատկութեան համար երաշխաւորում եմ 6 տարով։

Այդ ժամացոյցը շվեյցարական իսկական նոր սակի ոսկուց է, տղամարդկանց համար, 3 փականով, լարելը 36 ժամը մէկ անգամ, առանց բանալու։ ☛ ՏԼՓԱԿ, նկարի համաձայն, ☛ շատ տարածված և մեծ քանակութեամբ վաճառվում է։ Երօպայում վերջին ժամանակներս այդ ժամացոյցը գործածութիւնից դուրս է վանել ոսկէ ժամացոյցին։ Առաջարկում եմ ամեն մէկին օգտվել հանգամանքից և բանալ այդ ժամացոյցը։ Գինը 6 ր. 75 կ., 2 հատ—13 ☛ ՈՎ ՏԵՍՆՈՒՄ Է ԱՅԴ ԺԱՄԱՑՈՅՑԸ, ՄՈՌՎՈՒՄ Է, ՈՐ ՆԱ ԱՐԺԷ 200 ՐՈՒԲ. ☛ Կանանց ժամաց., գինը 8 ր. 25 կ.։ Տղամարդկ. ժամ., բաց, նոր ոսկուց, գինը 4 ր. 75 կոպէկ։

Սև, տափակ, բաց ժամաց. I տեսակի, ոսկեզօծ ցիֆերբլատով, գինը 3 ր. 90 կ.։

Արծաթէ ժամ., 3 ամուր փականներով, I տեսակի գինը 12 ր., 15 և 18 ռուբլի։

Սև ժամաց., բաց, մշտական օրացոյցով, գինը 4 ր. 50 կ., լաւ տեսակինը՝ 6 ր.

Գները շատ էժան են նշանակված, որպէսզի կարելիութիւն տրվի իւրաքանչիւր օգտվելու այդ ժամացոյցից։ Ճանապարհածախքի և մաքսի համար հաշվվում է 85 կ.։

Գնորդներ (որը կարիք ունենան ոսկի ժամացոյցի, ոսկեայ շղթաներ գինը 95 կ., 1 ր. 75 կ., 2 ր. 50 կ. և 3 ր.։ Պատվերները ուղարկվում են վերադիր վճարով, առանց կանխավճարի։ Պահանջները կարելի է տարել ռուսերէն լեզուով։

Հասցէն (որը կարելի է կարել և կպցնել ծրարի երեսին).

ШВЕЙЦАРІЯ. Ste Croix.—182. (Suisse) M. Jakubowitz. Ст. Круа.

Շվեյցարիա փակ նամակներ ուղարկելուց պէտք է կպցնել 10 կ. նամակադրոշմ, բաց նամակների համար—4 կ.։ (չ.) (B.4258) 100. 2—1

Электропечатня Н. Г. Аганьянцъ